

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՉՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱՅ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Եւրախորհրդարանի հիմնական քաղաքական խումբերու ներկայացուցիչները հանդէս եկան Եւրոպային Միութեան Թուրքիոյ անդամակցութեան վերաբերեալ բանակցութիւններու օրակարգի վրայ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման մասին կէտը ընդգրկելու ի նպաստ: Պատգամաւորները, մասնաւորապէս կը պահանջեն որ Թուրքիոյ կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ առանց որեւէ նախապայմանի Հայաստանի շրջափակման վերացման մասին հարցերը ամրագրուին որպէս Եւրոպային Միութեան Թուրքիոյ անդամակցութեան նախապայման:

Ֆինլանտան, որ Յուլիս մէկէն սկսեալ վեց ամիսով ստանձնած է Եւրոպային Միութեան նախագահութիւնը, սպառնացած է խզել այդ կազմակերպութեան անդամակցելու շուրջ Թուրքիոյ հետ բանակցութիւնները: Ֆինլանտայի վարչապետ Մատտի Վանհանէն յայտարարած է որ, երկխօսու-

թիւնը Թուրքիոյ եւ Եւրոպայի Միութեան միջեւ կրնայ դադարիլ «ցանկացած պահի», եթէ Անգարան չկատարէ իր պարտաւորութիւնները Եւրամիութեան առջեւ:

Միւս կողմէ, Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարար Աբդուլազ Գիւլ շնորհակալութիւն յայտնած է ԱՄՆ Պետական Քարտուղար Քոնսոլիդա Ռայսին՝ Գոնկըէի կողմէ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունումը կասեցնելու նպատակով իր կատարած ջանքերուն համար:

Ուաշինկթընի մէջ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Գիւլ յայտարարած է, որ այդ բանաձեւի ընդունումը կրնար բարդութիւններ յառաջացնել Միացեալ Նահանգներու եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու գծով:

«Թուրքիան կոչ կ'ընէ ԱՄՆ կառավարութեան յետադիմելու եւս խոչընդոտել Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունումը», - ըսած է Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարը:

ԵՐԱՍԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԹՐՔԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՃԻՌ

Եւրայանձնաժողովը Չորեքշաբթի, Յուլիս 12-ին դատապարտեց թրքական դատարանի վճիռը Պոլսոյ մէջ լոյս տեսնող հայկական «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինկի նկատմամբ:

Թուրքիոյ վերաքննիչ դատարանը նոյն օրը վերահաստատած էր Տինկի դատաւճիռը, որու համաձայն ան դատապարտուած էր 6 ամսուայ պայմանական ազատազրկման՝ «Թուրքերու ազգային ինքնութիւնը վիրաւորելու» մեղադրանքով:

«Ես հիասթափուած եմ այս վճռով, որ կը սահմանափակէ արտայայտուելու ազատութիւնը», - ըսած է Եւրամիութեան ընդլայնման հարցերով յանձնակատար Օլի Ռէյն: Ան կարծիք յայտնած է, որ Թուրքիոյ նոր

Քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածի հիման վրայ արձակուած այս առաջին վճիռը կրնայ նախադէպ հանդիսանալ, քանի որ դատարաններու առջեւ կը շարունակուին նման գործերու քննութիւնը:

«Այդ պատճառով ես կոչ կ'ընեմ Թուրքիոյ իշխանութիւններուն փոխել 301-րդ յօդուածը եւ նման ձեւակերպումները՝ երաշխաւորելու համար արտաքայտուելու ազատութիւնը Թուրքիոյ մէջ», - ըսած է Օլի Ռէյն:

Թրքական դատարանի կողմէ առնուած պայմանական վճիռի հիման վրայ Հրանդ Տինկ կրնայ բանտարկուիլ, եթէ յառաջիկայ 5 տարիներու ընթացքին նոյն մեղադրանքը դարձեալ ներկայացուի իրեն:

«ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ Է»

Յուլիս 11-ին Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեան անգամ մը եւս հաստատեց որ ԵԱՀԿ Մինսկի խումբի առաջարկութիւնները՝ դադարեղեան հարցի լուծման վերաբերեալ, ընդունելի են Հայաստանի համար: Ան շեշտեց որ, Մինսկի խումբի համանախագահներու՝ Յունիս 22-ի յայտարարութիւնը չի նշանակել թէ գործընթացը աւարտած է: «Առաջարկուող փաստաթուղթը իտէլական չէ, բայց ընդունելի է բոլոր կողմերի համար, որ ցանկութիւն ունեն կոմպրոմիսի ճանապարհով հասնել խնդրի լուծմանը», ըսաւ Օսկանեան:

Վարդան Օսկանեանը չի բացառեց, որ ուսուսական Սան Փիթըրսպուրկ քաղաքին մէջ կայանալիք Մեծ Ութնեակի երկրներու ղեկավարներու հանդիպմանը ժամանակ, անդրադարձ ըլլայ նաեւ Լեւոնային Ղարաբաղի հարցին, սակայն ան չի խորհրդ, թէ Ռոբերդ Քոչարեան ու Իլհամ Ալիեւ կը հրաւիրուին այդ հանդիպումին. «Եթէ Պոլսաբնակից յետոյ լուրջ յառաջընթաց լինէր՝ կը հրաւիրէին: Իմաստ չկայ հիմա հրաւիրել», յայտարարեց ան:

Ըստ Օսկանեանի, այսօր Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ որեւէ շփում չկայ:

Միւս կողմէ, ԵԱՀԿ Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Մաթիւ Պրայզա իր չաճախակի յայտարարութիւններով կը շա-



Մշխ-ի Կովկասեան ծրագրի ղեկավար Մարինա Յրէյզեր

րունակէ ճնշում գործադրել Ռոբերդ Քոչարեանի եւ Իլհամ Ալիեւի վրայ: Ան BBC ռատիոկայանին ըսած է որ, կարգաւորման գործընթացը փակուղիի առջեւ չէ: Սակայն, իրավիճակ մըն է, երբ նախագահները պէտք է որոշում կայացնեն, թէ ինչ կ'ուզեն:

Պրայզայի կարծիքով, երկու նախագահներն ալ ունին քաղաքական կամք եւ ցանկութիւն գործակցելու, «բայց մենք չենք գիտեր, պատրաստ են արդեօք կատարելով շարք մը բարդ եւ վերջնական քայլեր, համաձայնութեան գալ շրջանակային սկզբունքներու առնչութեամբ», ըսած է Պրայզան:

Շար.ը էջ 4

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ

Ամերիկահայ մամուլի ու մտաւորականութեան անունից դատապարտում ենք ու մեր խոր մտահոգութիւնն ենք յայտնում «Ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր՝ Արման Բարաջանեանի ձեռքարկութեան ու որպէս խափանման միջոց նրան երկու ամսով նախնական կալանքի դատապարտելու փաստը:

Հակառակ իշխանութիւններին՝ յարուցուած գործի կապակցութեամբ տուած բացատրութիւններին, մենք համոզուած ենք որ Արման Բարաջանեանը այսօր միայն ու միայն մնում է կալանքի տակ իր քաղաքական ու լրագրողական գործունէութեան պատճառով: Այդ են վկայում ոչ միայն նրա ձեռքարկութեան հանգամանակները, այլև նրա նկատմամբ հապեւտ կերպով կալանքի որոշումը կայացնելու փաստը: Խօսքի ազատութիւնը՝ Հայաստանի իրաւաւնչիւր քաղաքացու Սահմանադրական Իրաւունքն է ու հիմնադրուած է ժողովրդավարական սկզբունքներին: Սակայն երբ օրէնքն ու դատական համակարգը օգտագործում են ենթադրու ու սահմանափակելու այդ իրաւունքը, այս դարձարձակապէս անընդունելի է:

Կասկածից վեր է, որ յարուցուած գործը միայն պատրուակ է, գալիք ընտրութիւններին նախօրեակին՝ Արման Բարաջանեանին լոնցենելու ու այդպիսով քաղաքական թափարկումից վերացնելու եւս մի լրատուամիջոց որն անկախ է ու անվերահսկելի իշխանութիւններին կողմից:

Առ այդ՝ Հայաստանի Հանրապետութեան Դատախազութիւնից պահանջում ենք, փոխել խափանման միջոցը ու կալանքից անյապաղ ազատ արձակել Արման Բարաջանեանին, յանուն արդարութեան եւ մամուլի ու խօսքի ազատութեան:

Armenian Observer շարաքաթերթ, Մասիս շարաքաթերթ, Նոր Կեանք շարաքաթերթ, Նոր Հայաստան օրաքերթ, Նոր Օր շարաքաթերթ, Համայնապատկեր ամսագիր, Քաջ Նազար քրդական ամսագիր, AMGA հեռուստաընկերութիւն, Հայ Թելեժամ - AWTB ընկերութիւն, Անահիտ-Show հեռուստաօրաքերթ, Harmony հեռուստաօրաքերթ, Նոր Սերունդ հեռուստաօրաքերթ, Պատուհան հեռուստաօրաքերթ, Վարպոյր հեռուստաօրաքերթ

ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԸ ՀԱՍՈՉՈՒԱԾ ԵՆ, ՈՐ ԵՐԿԻՐԸ ՍԽԱԼ ՈՒՂՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ Է

Հայաստանցիներու մեծ մասը համոզմունք յայտնած է, որ երկիրը կ'ընթանայ սխալ ուղղութեամբ:

Baltic Surveys / International Republican Institute կազմակերպութեան կողմէ կատարուած հարցախոյզի արդիւնքներով, մասնակիցներու 55 տոկոսը կը խորհի, որ Հայաստան սխալ ուղղութեամբ կ'ընթանայ: 32 տոկոսը համոզուած է, որ երկիրը կը գտնուի ճիշդ ուղղութեան վրայ: 13 տոկոսը չէ կողմնորոշուած կամ չէ ուզած պատասխանել:

Ապրիլի վերջերուն եւ Մայիսի սկզբին կատարուած հարցախոյզին մասնակցած է 1200 չափահաս հայաստանցի:

Միւս կողմէ կը հարցորուի որ 2006 թուականի առաջին 5 ամիսներու ընթացքին Հայաստանէն մեկնած է 298,234 հոգի, իսկ ժամանած՝ 253, 759, տարբերութիւնը՝ 44,475 ի վնաս Հայաստանի:

2005 թուականի նոյն ժամանակամիջոցի համեմատ մեկնողներու եւ ժամանողներու տարբերութիւնը աճած է 1,8 հազարով, կամ 4,3%-ով:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՍԿ ԴՈՒՔ ԹԱԼԱՆԸ ՕՐԵՆՔՈ՛Վ ԷՔ ԿԱՏԱՐՈՒՄ

Յայտնի ճշմարտություն է, որ ստրուկների նկատմամբ առաւել դաժան վերաբերմունք են ունենում նոյն այդ ստրուկների միջից «առաջ քաշուած» վերակացուները՝ նրանք, ովքեր շարունակում են մնալ իրենց տէրերի ստրուկը, բայց իրաւունք են ստանում ճնշել միւսներին:

Հայաստանի այսօրուայ իշխանութիւններն իրենց գործելակերպով եւս մէկ անգամ հաստատում են այս ճշմարտութիւնը: Սրանք, որ չիրաւի ստրկական կախուածութեան մէջ են Մոսկուայից եւ իրենց իշխանութիւնը պահպանելու համար դիմում են ամենօրեայ ստորացումներին, դրա փոխարէն վրէժ են լուծում ժողովրդից: Ուշադրութիւն դարձրե՞լ էք, թէ ինչպէս են այս իշխանութիւնները յարաբերում ռուսաստանցի իրենց գործընկերների հետ: Վերջերս, օրինակ, մամուլում տեղեկութիւններ յայտնուեցին, թէ ռուսները մտադիր են գնել Իրան-Հայաստան գազամուղի հայկական հատուածը, Մաղկաձորի մարզաբազան եւ այլն: Եւ ի՞նչ: Որեւէ պաշտօնեայ չհամարձակուեց յայտարարել, թէ Հայաստանն այդ օբիեկտները վաճառելու մտադրութիւն չունի: Դրա փոխարէն մի կերպ կմկմալով յայտարարեցին, թէ առայժմ նման առաջարկներ չեն ստացել: Այսինքն, «եթէ առաջարկներ ստանանք», ձարնե՞րս ինչ, պիտի վաճառենք»: Այն էլ, բնականաբար, ռուսների առաջարկած գնով:

Բնականաբար, այս իշխանութիւնները ժողովրդի հետ վարուած են ճիշդ այնպէս, ինչպէս ռուսներն են վարուած իրենց հետ: Երէկ էլ Ազգային ժողովի արտահերթ նիստում պիտի օրինական ձեւակերպում տրուէր Երեւանի կենտրոնի բնակիչներին իրենց տները վռնդելու եւ նրանց ունեցուածքը խլելու «գործընթացին»: Իհարկէ, բազմաթիւ ցուցարարներ հաւաքուել էին Աժ մուտքի մօտ եւ պահանջում էին քրէական գործեր յարուցել իրենց ունեցուածքն ապօրինաբար զաւթածների՝ կառավարութեան եւ Երեւանի քաղաքապետի նկատմամբ, բայց դա հազիւ թէ որեւէ բան փոխի: Քուէարկութիւնն ամենայն հաւանականութեամբ տեղի կ'ունենայ այսօր:

Ի՞նչ են անում իշխանութիւնները: Նրանց արածը հետեւեալն է. Քոչարեանի շրջապատից որեւէ մէկը շրջում է Երեւանի կենտրոնով, գտնում ինչ-որ տարածք, որտեղ կարելի է «էլիտար շէնք» կառուցել, յետոյ գնում ու «կառավարութեան որոշում հանում», որ այդ տարածքը «պետութեան կարիքների համար» խիստ անհրաժեշտ է: Յետոյ նոյն այդ թայֆայից մէկը (որպէս կանոն՝ արդարադատութեան նախարար Դա-

ւիթ Յարութիւնեանի մերձաւորներին) գալիս է, գնահատում մարդկանց ունեցուածքը եւ ինչ-որ չնչին գումար առաջարկում: Ուզում են՝ վերցրու, չես ուզում՝ ուժով կը խլենք, ակտիվ դիմադրողներին էլ կը նստացնենք:

Խնդիրն այստեղ այն չէ, թէ մարդկանցից խլուած տարածքներում այս գեղցիներն ինչ են կառուցելու: Գեղցի են՝ պիտի «էլիտար» գոմեր կառուցեն, եւ որեւէ մէկը նրանցից ուրիշ բան չի էլ սպասում: Խնդիրն այն է, որ այդ էլիտար գոմերը ձեւակերպուած են «պետութեան կարիքների համար» (եթէ պետական պաշտօնեաների կարիքների համար լինէր՝ կը հասկանալինք): Եւ ստացում է, որ Քոչարեանի մերձաւորներից մէկը գիւղից գալիս է ու որոշում իրենց կոլխոզի ֆերմայի օրինակով մի շէնք կառուցել, իշխանութիւններն էլ այդ առթիւ մարդկանց ունեցուածքը խլում են:

Յիշեցնենք, որ նոյնիսկ Խորհրդային Հայաստանում, որտեղ մարդու իրաւունքների մասին քչերն էին լսել, իսկ սեփականութեան իրաւունքն ընդհանրապէս որեւէ կերպ չէր երաշխաւորուած, պետութեան կարիքների համար մարդու ունեցուածքը վերցնելուց յետոյ համարժէք փոխհատուցում էին տալիս: Ասենք՝ ջրամբար կամ օդանավակայան կառուցելու համար մի քանի գիւղ էին տեղահանում եւ բոլորին Երեւանում ապահովում էին բնակարաններով: Նոյնը նաեւ՝ բազմալարկ շէնքեր կառուցելիս (մարդկանց այդ շէնքում բնակարաններ էին տալիս): Իսկ այն, ինչ կատարուած է այսօր, ուղղակի քրէական յանցագործութիւն է՝ ուղղուած սեփական ժողովրդի դէմ: Եւ, ի դէպ, ուզում ենք յատուկ գոշացնել «էլիտար շէնքերի» բնակարանների տէրերին: Շատ մի՛ ոգեւորուէք, իշխանափոխութիւնից յետոյ այդ շինութիւնները կարող են նաեւ դատական կարգով ճանաչուել որպէս «ապօրինի կառուցանք», հետեւաբար՝ կարող են ապօրինի ճանաչուել նաեւ ձեր սեփականութեան վկայականները: Հասկանում ենք, որ մեծ հաշուով՝ դուք այնքան էլ մեղաւոր չէք, բայց կարգն է այդպիսին. գողացուած մեքենաների գնորդներն էլ են շատ յաճախ տուժում:

Մեզ մնում է միայն աւելացնել, որ կազմակերպուած թաւախի այս ամբողջ համակարգում Դաւիթ Յարութիւնեանը շատ առանցքային դերակատարում ունի: Իսկ նման բեռով պէտք է ոչ թէ «մեծ քաղաքականութիւն» մտնել, այլ սուխարիի մեծ պաշար կուտակել:

ՀՐԱՅՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ «ՉՈՐՐՈՐԴ ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԶԱԿՆԿԱԼԷ ԶՆԱՅԱԾ ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՄ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԷՔ

«Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները Հայաստանի Հանրապետութեան տարածքում եւ նրա սահմաններից դուրս գտնուած են Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան ներքոյ»:

Այս հիասքանչ, ոգեւորող, նոյնիսկ հպարտութիւն ներշնչող բառերը մեր Սահմանադրութիւնից են՝ 11.3 յօդուածից: Իսկ պաշտպանուած են արդեօք ՀՀ սահմաններից դուրս գտնուող մեր քաղաքացիները: Մասնաւորապէս Ռուսաստանում հայերի նկատմամբ դաժան ու պարբերական ոտնձգութիւնները ցոյց են տալիս, որ որեւէ պաշտպանութիւն մենք մեր քաղաքացիներին ցուցաբերել չենք կարողանում:

Իսկ ինչպէ՞ս կարելի է պաշտպանել: Թուում է, թէ պաշտպանութեան տարբերակներ չկան: Ասենք, ՀՀ քաղաքացիների նկատմամբ ոտնձգութիւնները կանխելու համար Հայաստանը չի կարող օդ բարձրացնել ու մակոթիչներն ու, այսպէս կոչուած, կէտային հարուածներ հասցնել չարագործների որջերին: Փորձը ցոյց է տալիս նաեւ, որ հայկական յատուկ ծառայութիւնները չեն կարողանում այլ երկրներից առեւանգել ու դատարանի առաջ կանգնացնելու համար Հայաստան բերել այդ չարագործներին, ինչպէս անում են որոշ երկրները: Չնայած սրանք մի փոքր ազդեալի, բայց միեւնոյն ժամանակ էֆեկտիւ միջոցներ են, այդուհանդերձ, Հայաստանի համար, գոնէ առայժմ՝ ոչ կիրառելի են:

Հայաստանը կարող է բողոք պարունակող յայտարարութիւններ անել, դրանով իսկ զրաւել այն երկրի իշխանութիւնների ուշադրութիւնը, որտեղ ՀՀ քաղաքացիները ազգային հողի վրայ բռնութիւնների են ենթարկուած: ՀՀ-ն կարող է պահանջել խստագոյն պատժել չարագործներին, տուեալ երկրի իրաւապահ մարմինների հետ մասնակցել չարագործների յայտնաբերման գործին, իսկ յայտնաբերելուց յետոյ որպէս շահագրգիռ կողմ մասնակցել նրանց դատավարութիւններին եւ այլն:

Մի խօսքով, ինչ-որ միջոցներ կան, որոնց Հայաստանը ընդհանրապէս չի դիմում, եթէ հաշուի չառնենք հայ սպային կացնահարած ատորպէճանցու դատավարութիւնը Բուխարեստում: Առաջին հայեացքից ՀՀ օրէնսդրութիւնը

սպասարկելու են «Բարգաւաճ Հայաստանին», ինչպէս նաեւ՝ Սերժ Սարգսեանին, ՀՀԿ-ին ու դրան մերձակա կուսակցութիւններին: Եւ եթէ յանկարծ այս ընտրաըշաւի ընթացքում «Ա1+»-ը վերաբացուի, միանգամայն անցանկալի ու անկանխատեսելի բաներ կարող են տեղի ունենալ, եւ այդ է պատճառը, որ իշխանութիւնները այսօր կռիւ են տալիս «Ա1+»-ի դեռեւս պահանջուած բեկորների դէմ:

Որովհետեւ մեր իշխանութիւններն էլ Լենինի պէս համոզուած են, որ արուեստներից կարեւորագոյնն այսօր կլինոն է, եւ այն, ինչ ցուցադրուած է այսօր մեր ազատ ու պատասխանատու եթերներից, ո՛չ թէ մեր կեանքն է, այլ, միանգամայն յօրինուել կլինօ, անգամ կարող ենք ասել՝ տափակ սերիալ: Եւ մեր իշխանութիւնների ցանկութիւնն այն է, որ այդ սերիալը երբեւէ չաւարտուի:

«ՏԱՐԵԳԻՐ»

ընդամէնը ընդհանուր սահմանումներ է տալիս ՀՀ սահմաններից դուրս ՀՀ քաղաքացիների պաշտպանութեան մասին՝ պաշտպանում է եւ վերջ: Ու հենց սրանով էլ առաջին հայեացքից կարելի է բացատրել այն անկարողութիւնը, որ դրսեւորում է ՀՀ իշխանութիւնը Ռուսաստանում ազգային հողի վրայ հայերի նկատմամբ իրականացուող բռնութիւնների շուրջ:

Բայց սա միայն առաջին հայեացքից: Իրականում ՀՀ օրէնսդրութիւնը պարզապէս պարտադրում է ՀՀ իշխանութիւններին որոշակի միջոցառումներ ձեռնարկել նման պայմաններում: Հայաստանում այս տարուայ Յունուարի մէկից գործում է «Բնակչութեան զբաղուածութեան եւ գործազրկութեան դէպքում սոցիալական պաշտպանութեան մասին» ՀՀ օրէնքը: Եւ այդ օրէնքում կայ մի ուշադրաւ դրոյթ: Ըստ այդմ՝ կառավարութեան կողմից լիազօրուած մարմինը «միջպետական յարաբերութիւնների վատթարացման, առողջապահական, տարբերային աղէտի եւ այլ անբարենպաստ պայմանների դէպքում հանդէս է գալիս առանձին պետութիւններում արտագնայ աշխատանքի մեկնման աննպատակալարմարութեան մասին յայտարարութեամբ»:

Ռուսաստանում վերջին շրջանում ազգային հողի վրայ ՀՀ քաղաքացիների նկատմամբ իրականացուող ոտնձգութիւնները հաշուի առնելով՝ կարելի է խորհուրդ տալ ՀՀ քաղաքացիներին ձեռնպահ մնալ արտագնայ աշխատանքի մեկնել Ռուսաստանի Դաշնութիւն: Սակայն, նման յայտարարութիւն միչեւ օրս չի եղել:

ՀԱՅԿ ԳԷՈՐԳԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Մրջանի ԽՄԲԱԳԻՐ SOԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ ՍԱԳԱ ԹՈՒԹԵԱՆ ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ Գեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ՍԵՐԻԱԼ

Չնայած «Ա1+» հեռուստարկերութիւնը որպէս այդպիսին վաղուց արդէն չի գործում, եւ երբեմնի «Ա1+»-ից մնացել են ընդամէնը համակարգչային սայթն ու «Այլըֆե» շաբաթաթերթը, այդուհանդերձ, Հայաստանի իշխանութիւններն «Ա1+»-ի հալածանքների մասով իրենց բաւարարուած չեն գգում եւ ինտենսիվ շարունակում են հալածանքները «Ա1+»-ի փշրանքների ու աւերակների դէմ:

Արտաքուստ տպակորութիւն է ստեղծուած, որ Հայաստանի իշխանութիւնները վերջին ու վճռա-

կան հարուածներն են տալիս ընկածին, սակայն իրականութիւնն այն է, որ իշխանութիւններն «Ա1+»-ից դեռեւս լրջօրէն են վախենում ու զգուշանում, քանի որ առջեւում հայաստանեան գոյգ ընտրութիւններն են, եւ եթէ եւրոպական կառուցներն այնուամենայնիւ ստիպեն վերաբացել «Ա1+»-ը, կը յայտնուեն միանգամայն բարդ վիճակում ընտրութիւններից անմիջապէս առաջ:

Արդէն պարզից էլ պարզ է, որ մեր գործող հեռուստատալիքներն ընտրութիւնների ընթացքում՝

ԼՈՒՐԵՐ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՄՏԱՅՈՒԹԻՒՆ Ե ԶԱՅՏՆՈՒՄ «ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻ ԿԱԼԱՆՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՆԻԻ ԵՈՐՔ, 10 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅ-ԵԱՆ ՏԱՊԱՆ: ՆԻԼ ԵՈՐՔՈՒՄ տեղա-կայուած «Լրագրողների Պաշտպանութեան Կոմիտէ» կազմակերպութիւնը Յուլիսի 7-ի հաղորդագրութիւնում տեղեկացնում է «Ժամանակ Երեւան» օրաթերթի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանեանի կալանքի մասին: «Ժամանակ Երեւան»-ի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանեանին սպառնում է 5 տարուայ ազատազրկում, ինչպէս պնդում են՝ զինուորական ծառայութիւնից խուսափելու նպատակով փաստաթղթեր կեղծելու համար, սակայն Լրագրողների Պաշտպանութեան Կոմիտէն եւ այլօք մտահոգուած են, որ մեղադրանքը պայմանաւորուած է նրա թերթի կողմից կառավարութեան գործելակերպի քննադատական լուսաբանմամբ»,- ասուած է հաղորդագրութիւնում:

Լոնդոնում տեղակայուած Պատերազմի եւ խաղաղութեան Լուսաբանման ինստիտուտի (IWPR) հայաստանեան գրասենեակի ղեկավար Սեդա Մուրադեանը յայտնել է, որ Բաբաջանեանին կալանել են Յունիսի 26-ին՝ ընդամենը մի քանի օր անց այն քանից, երբ նրա թերթը հրատարակել է գլխավոր դատախազութեան անկախութիւնը հարցականի տակ դնող մի յօդուած: Թէեւ Բաբաջանեանը խոստովանել է, որ գորակոչից խուսափելու նպատակով փաստաթղթեր է կեղծել, այնուհանդերձ մամուլի ազատութեան եւ մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցերով զբաղուող կազմակերպութիւններն պնդում են, որ «Ժամանակ Երեւան» օրաթերթի

գլխավոր խմբագիր կալանքը պայմանաւորուած է նրա լրագրողական գործունէութեամբ:

Սեդա Մուրադեանը նշել է, որ Բաբաջանեանին գրաւի դիմաց կալանքից ազատելուց դատախազութեան հրաժարուելն «անչափ արտասովոր է նման գործում»:

«Իշխանութիւնները Բաբաջանեանին վերաբերուած են որպէս վտանգաւոր յանցագործի»,- ընդգծել է նա:

Լրագրողների Պաշտպանութեան Կոմիտէն տեղեկացնում է, որ Երեւանի Մամուլի Ակումբը, «Ինտերնիւզ Հայաստան»-ը, իսուքի ազատութեան Պաշտպանութեան Կոմիտէն, Հայաստանի Հելսինկեան Կոմիտէն եւ մամուլի ազատութեան հարցերով զբաղուող տեղական այլ կազմակերպութիւններ դիմել են գլխավոր դատախազին՝ յորդորելով փոխել Բաբաջանեանի խափանման միջոցը: Հայաստանեան եօթ թերթերի խմբագիրներ հանդէս են եկել յայտարարութեամբ, որում համոզմունք են յայտնում, որ Բաբաջանեանի կալանքը նպատակ ունի ահաբեկել ազատ մամուլը:


«Մենք անչափ անհանգստացած ենք, որ Արման Բաբաջանեանի դէմ քրէական գործը կարող է առնչուել նրա լրագրողական գործունէութեանը: Մենք կոչ ենք անում Հայաստանի իշխանութիւններին մինչեւ դատաւարութիւնն ազատ արձակել նրան եւ հրատարակել նրա դէմ իրենց ունեցած ապացոյցները», - յայտարարել է Լրագրողների Պաշտպանութեան Կոմիտէի գործադիր տնօրէն Ջոէլ Սայմոնը:

ԴԱԻԹ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. «ԾՐԱԳՐԵՐ ՈՒՆԵՄ ԱԿՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԶԲԱՂՈՒԵԼՈՒ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեանը յայտարարել է, որ ունի «ակտիվ քաղաքականութեամբ զբաղուելու ծրագրեր»:

Յարութիւնեանը, ի պատասխան «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօք իր մամուլի քարտուղար Արա Սողաթեանի հրաժարականը քաղաքական յենարան կամ «թիմ» պատրաստելու նպատակ է հետապնդում, ասաց. - «Որպէս ինքնուրոյն քաղաքական ուժ, անշուշտ, պէտք է թիմ ունենալ: Իսկ այն, որ ես թիմ ունեմ, կարծում եմ, դա միանշանակ է: Կարծում եմ, որ հասարակութեան մէջ, նաեւ որեւէ քաղաքական ուժ չի կասկածում, որ ես թիմ ունեմ: Քաղաքականութեամբ, այո, նպատակ ունեմ զբաղուելու, ինչպէս եւ այժմ էլ զբաղուում եմ: Ծրագրեր ունեմ, թէ՛ ոչ. այո, ունեմ»:

Արդարադատութեան նախարարի խօսնակ Արա Սողաթեանը երեքշաբթի օրը աշխատանքից ազատուելու դիմում է ներկայացրել՝ այլ աշխատանքի անցնելու



Հայաստանի Արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեան

պատճառաբանութեամբ: «Ունեմ որոշակի ծրագրեր, որոնք վերաբերում են զանգուածային լրատուութեան դաշտին», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Սողաթեանը՝ առանց մանրամասնելու: - «Վստահ եմ, որ այդ ծրագրերը օգտակար կը լինեն ընդհանուր դաշտի զարգացմանը»:

ԵՐԵՒԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՈՍԿԷ ԾԻՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԿԻՆՈՓԱՌԱՏՕՆԸ

ԵՐԵՒԱՆ, 11 ՅՈՒՆԻՍԻ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ - ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ: Երեւանի «Մոսկուա» կինոթատրոնում Համօ Բեկնազարեանի «Նամուս» ֆիլմի ցուցադրութեամբ Յուլիսի 10-ին մեկնարկեց «Ոսկէ ծիրան» միջազգային երրորդ կինոփառատօնը: Փառատօնի բացման առիթով ցուցադրուեց նաեւ Արսէն Ազատեանի եւ Նարինէ Մկրտչեանի «Անդրէյ» 15-րդ օրվանոց

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՈՒԺԸ ԱՄԻՍՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԶԵ ԿԸՅ-ՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Անցած տարի կայացած սահմանադրական հանրաքուէից յետոյ Ազգային ժողովում ներկայացուած «Ազգային Միաբանութիւն» կուսակցութիւնը գրկուած է Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովում (ԿԸՅ) անդամ ունենալու հնարաւորութիւնից, քանի որ Ռոբերտ Քոչարեանը դեռեւս չի ստորագրել կուսակցութեան ներկայացուցիչ Ջաւէն Պլուզեանին կրկին ԿԸՅ անդամ նշանակելու մասին հրամանագիրը:

Կուսակցութեան փոխնախագահ Ալեքսան Կարապետեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ Քոչարեանը անպատասխան է թողել խնդրի առնչութեամբ իրենց ուղարկած երկու նամակները:

«Անցել է արդէն մօտաւորապէս մի 8-9 ամիս, բայց հրամանագրում կատարուած չէ, եւ օրէնքով հանող «Ազգային Միաբանութեան» անդամի տեղը Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովում թափուր է, եւ մենք չենք կարողանում ընտրական յանձնաժողովներին եւ ընդհանրապէս օրէնքի հետ կապուած մեր պարտաւորութիւնները կատարել», - ասաց

Կարապետեանը՝ յաւելելով. - «Կենտրոնական ընտրական յանձնաժողովի մեր աշխատանքը՝ Ռոբերտ Քոչարեանի՝ հրամանը չստորագրելու հետ կապուած, պարալիզացուած է»:

ԿԸՅ-ի անդամ, ընդդիմադիր «Ազգային Միաբանութեան» ներկայացուցիչ Ջաւէն Պլուզեանը պաշտօնից ցուցադրաբար հրաժարուել էր անցած տարի սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէից մի քանի օր առաջ: Հանրաքուէից յետոյ «Ազգային Միաբանութիւն»-ը կրկին առաջադրեց Պլուզեանի թեկնածութիւնը:

Գործող ընտրական օրէնագրքի համաձայն, Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի անդամը նշանակուած է երկրի նախագահի հրամանագրով, բայց նոյն օրէնքը չի նշում, թէ կոնկրետ ինչ ժամանակահատուածում պէտք է նախագահը ստորագրի հրամանագիրը:

Նախագահի խօսնակ Վիկտոր Սողոմոնեանը «Ազատութիւն» ռադիոկայանին այս կապակցութեամբ ասաց, որ օրէնքում որեւէ պարտադրանք չկայ, ուստի նախագահը հրամանագիրը կը ստորագրի այն ժամանակ, երբ «յարմար գտնի»:

«ՇԱՐՈՒՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԶԵ ԿԸՅ-ՈՒՄ ԿԱՍԿԱԾՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հարնաքար հիւրանոցային համալիրը կարծես թէ դառնում է ՀՀԿ նախընտրական շտաբը: Հարնաքարում արդէն մի քանի անգամ տեղի են ունեցել ՀՀԿ վերնախաւի հաւաքներ, որ նախաձեռնել է դեռեւս կուսակցութեան անդամակցելու մասին չյայտարարած պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը:

Lragir.am-ին յաջողուել է որոշ մանրամասներ պարզել այդ հաւաքներից: Պաշտպանութեան նախարարը դրանք նախաձեռնում է ՀՀԿ շարքերը շտապ համալրելու եւ անդամակցող պաշտօնեաներին ու օլիգարխներին «հաւատարմութեան երդում» ստանալու համար: Սերժ Սարգսեանը բոլորին վստահեցրել է, որ ինքն է լինելու ՀՀ յաջող նախագահը եւ կարող են համարձակ աջակցել իրեն, քանի որ ներսում այդ հարցը վճռուած է: Ըստ մեր ունեցած տեղեկութեան, հաւաքներից մէկի ժամանակ ներկայներից մէկը փորձել է Սերժ Սարգսեանից պարզել, թէ արտերկրում ինչպէս են վերաբերում նրա նախագահութեանը:

Պաշտպանութեան նախարարն այդ առումով չի կարողացել վստահութիւն հաղորդել իր «բանակին»: Սերժ Սարգսեանը տուել է բազմաշանակ պատասխան, ասելով, որ արտերկրի վերաբերմունքի հարցը կը փորձեն ինչ որ կերպ լուծել: Մեր աղբիւրը նշում է, որ պաշտպանութեան նախարարի այդ պատասխանը բաւական կասկածներ է հարուցել ՀՀԿ շրջապատում ապագայ զարգացումների, մասնաւորապէս Սերժ Սարգսեանի տուած երաշխիքների առումով:

ՇԱՐՈՒՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ 15-ԱՄԵԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Հայաստանի խորհրդարանը միաձայն հաստատեց «Համաներում յայտարարելու մասին» որոշումը:

Հայաստանի անկախութեան 15-ամեակի կապակցութեամբ յայտարարուած համաներումը կը տարածուի մօտ 600-700 մարդու վրայ, «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց Ազգային ժողովի պետաիրական հարցերով յանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Պետրոսեանը:

Նրա վկայութեամբ, ազատ կ'արձակուի շուրջ 300 մարդ: Համաներումը չի տարածուում առանձնապէս ծանր յանցագործութիւններ գործած անձանց եւ կրկնայանցագործների վրայ:

Համաներման որոշումն ուժի մէջ կը մտնի պաշտօնական հրատարակմանը յաջորդող օրուանից եւ ենթակայ է կատարման մինչեւ 2006 թուականի Սեպտեմբերի 30-ը:

Սա նորանկախ Հայաստանի պատմութեան ընթացքում 7-րդ համաներումն է: Վերջին համաներումը, որը տարածուել է այն ժամանակ կալանավարներում եւ մեկուսարաններում գտնուող մօտ 6000 անձանց մէկ երրորդի վրայ, եղել է 2001 թուականին՝ քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակի առթիւ:

Վաւերագրական կինոնկարը՝ նուիրուած անուանի կինոռեժիսոր Անդրէյ Տարկովսկու 1965 թ. Հայաստանեան այցին: Ողջունելով փառատօնի հիւրերին եւ մասնակիցներին՝ «Ոսկէ ծիրան»-ի պատուաւոր նախագահ, Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանը նշեց, որ երբ երեք տարի առաջ ինքը ողջունում էր առաջին փառատօնի նորամուտը, մտահոգութիւն ունէր, որ այն շարունակականութիւն չի ունենայ:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉՈՒ՞ ԷԻՆ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՕԺԱՆԴԱԿՈՒՄ ԿՈՌՈՒՄՊԱՅՈՒԱՑ ԸԱՄԱԿԱՐԳԻՆ

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթիլ Պրայզայի յայտարարությունները Հայաստանի ներքաղաքական կեանքի ամենաքննարկուող թեմաներից մեկն է: Առաւել եւս, որ այդպիսի թեմաներ եւ քննարկումներ պատահում են շատ հազուադէպ: Ամերիկացի համանախագահի յայտարարությունները նշանակալից էր նաեւ այն պատճառով, որ առնչուած էր ոչ միայն Ղարաբաղի խնդրին, այլեւ Հայաստանի ներքաղաքական իրողություններին, եւ շատերի կարծիքով, այդ յայտարարությունները ներքաղաքական նոր զարգացումների ազդակ է: Պրայզայի յայտարարությունները եւ Ղարաբաղի հակամարտության ու ներքաղաքական զարգացումների վրայ դրա հնարաւոր ազդեցութեան մասին Lagir.am-ը փորձեց ստանալ քաղաքագէտ Ադասի Ենոքեանի մեկնաբանությունները:

- Պրն. Ենոքեան, Ձեր կարծիքով որն էր Մեթիլ Պրայզայի այդքան թափանցիկ ելույթի նպատակը եւ ինչ հետեւութիւն կարող ենք անել այդ յայտարարությունից: - Մեթիլ Պրայզայի բացառապատկառնորդ եւ ընդհանրապէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին յայտարարություններն ու իրենց լիազօրութիւնների առկախումը ամերիկեան արտաքին քաղաքականութեան ճկունութեան արտայայտություն են: Մեր տարածաշրջանում ամերիկեան դիւանագիտութիւնն առաջնորդուած էր realpolitik-ի յայտնի սկզբունքներով՝ յոյսը դնելով ուժի գերակաշխման եւ փոխադարձ բախանների մեխանիզմների վրայ: Ըստ էության, այդ մեխանիզմները ցոյց տուեցին իրենց անակունքիւնը դարաբաղեան հակամարտութեան կար-

գաւորման գործում: Պատճառները, թերեւս, երկուսն էին՝ չափազանց մեծ թուով տէրութիւնների շահերի բախումը եւ գերլարուած իրավիճակները ռեզիտի շուրջ՝ մի կողմից, եւ ուժային մեքանիզմների գործունէութեան սկզբունքների անորոշութիւնը ետաւըպատերազմեան ժամանակաշրջանում՝ միւս կողմից: Հիմա ամերիկեան դիւանագիտութիւնը դիմում է աշխատանքի իր միւս մեթոտին՝ ժողովրդավարութեանը: Այս յայտարարությունները պարզապէս դիմում էր՝ ուղղուած ժողովուրդներին, որպէսզի նրանք իրենց ձեռքը վերցնեն խնդրի լուծումը: Իհարկէ, սա նաեւ խոստովանութիւն էր, որ այն իշխանութիւնները, ում հետ Միացեալ Նահանգներն աշխատել է այսքան երկար ժամանակ, չեն ներկայացնում իրենց ժողովուրդներին, ժողովրդավարական չեն: Տուեալ դէպքում թոււմ էր, թէ սա ամենակարճ ճանապարհն էր, քանի որ ժողովրդավարութեան այլ քի վրայ ստեղծուած նորանկախ երկրներում ամենակարեւոր գործօնը հենց ժողովուրդն էլ պէտք է հանդիսանար, սակայն ամերիկացիները սկսեցին միւս ծայրից:

Կարծում եմ, անհրաժեշտութիւն կայ նաեւ ժողովուրդներին բացատրութիւններ տալու, մասնաւորապէս այն մասին, թէ ինչու էին իրենք օժանդակում հակաժողովրդավարական ռեժիմներին, ըստ էության, օգնում, որ ամրապնդուի կոռուպցիան համակարգը: Այսամէնի ըմբռնումն անհրաժեշտ է, որպէսզի ժողովրդի մօտ ամրապնդուի հաւատը իր ուժերի եւ հնարաւորութիւնների նկատմամբ, եւ ուղղակի ասեմ, յաղթահարուի վախը ժողովրդավարութիւնից:

ԸԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻՆ ՓԱՅԼՈՒՆ ԱՊԱԳԱՅ Է ՍՊԱՍԻՈՒՄ

Ե Ր Ե Ի Ա Ն , «ԼՐԱԳԻՐ»: Յուլիսի 11-ին Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանի եւ Լիբանանի արտգործ եւ սփւււքի նախարար Ֆաուզի Սալուսիի համատեղ ասուլիսի ժամանակ փաստուեց, որ երկու երկրների յարաբերութիւնները բարձր մակարդակի վրայ են, որ սակայն մի քիչ սառել էին Լիբանանում Ռաֆիկ Հարիրիի սպանութեան եւ դրան յաջորդած զարգացումների պատճառով: ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանեանը յոյս յայտնեց, որ Սալուսիի այցով «կը կարողանանք ամէն ինչ ետ դնել իրենց նորմալ հունի մէջ եւ փորձել հնարաւորինս շուտ կազմակերպել միջկառավարական յանձնաժողովի հանդիպումը»: Վարդան Օսկանեանը Լիբանանի արտգործնախարարին պատմել է զարաբաղեան հակամարտութեան ներկայի վերջին զարգացումների եւ տարածաշրջանային խնդիրների մասին: Սալուսիին էլ իր հերթին Հայաստանի արտգործնախարարին է պատմել Լիբանանում ընթացող



Լիբանանի եւ Հայաստանի Արտաքին Գործոց նախարարները կը պատասխանեն լրագրողներու հարցերուն

ազգային երկխօսութեան եւ Սիրիայի հետ յարաբերութիւնների մասին:

Լիբանանի արտգործնախարար ասաց, թէ հայ-լիբանանեան յարաբերութիւնները նաեւ զգացմունքային կողմ ունեն. «Լիբանանը տունն է մեծ հայկական համայնքի: Մենք հպարտ ենք այդ համայնքով, իրենց մասնակցութեամբ Լիբանանի զարգացմանը: Հայերը յաւելեալ արժէք են բերում մեր երկրին»: Հայերը Լիբանանում մեծ դեր ունեն մասնաւորաբար շինարարութեան մէջ, իսկ Հայաստանի ու Լիբանանի յարաբերութիւնները փայլուն ապագայ ունեն, Հայաստանը Լիբանանի առաջին ընկերներից է:

ՈՐՆ Է ԲԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացին վերաբերող վերջին զարգացումները բաւականաչափ հարցեր առաջացրին հայ ժողովրդի մօտ, որոնց պատասխանները հասարակութիւնն ակնկալում է ստանալ իր քաղաքական առաջնորդներից: Մինչ այժմ անորոշ են մնում Հայաստանում գործող մի շարք կուսակցութիւնների եւ քաղաքական ուժերի դիրքորոշումները՝ կապուած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ Յունիսի 22-ի յայտարարութեան, Հայաստանի Հանրապետութեան քաղաքականութեան, Լեռնային Ղարաբաղի ապագայի հետ: Ուստի, մենք՝ Հայաստանի երիտասարդներս, խնդրում ենք մեր աւագ գործընկերներից յստակեցնել իրենց կուսակցութիւնների պաշտօնական դիրքորոշումները հետեւեալ հարցերի նկատմամբ.

- 1. Մինսկի խումբը յայտարարեց, որ դադարեցնում է իր հետագայ գործունէութիւնը եւ բացառապէս բանակցութիւնների սեղանին դրուած փաստաթղթի բովանդակութիւնը: Դրանից պարզ դարձաւ, որ այն մասնաւորապէս ենթադրում է. - Ազատագրուած բոլոր շրջանների յանձնում Ատրպէյճանին յատուկ պայմաններ սահմանելով միայն Լաչինի եւ մասամբ Քելբաշարի համար, - Տեղահանուած ատրպէյճանցիների վերադարձ, - տարիներ անց ԼՂՀ կարգավիճակի վերաբերեալ հանրաքուէի յին հանրութիւնը պիտի չի խառնուի: Այսինքն, միջազգային հանրութիւնը կը հետեւի, թէ կողմերէն որ մէկը հակառակորդին վերջնական պարտութեան կը մատնէ:

ԸԱՅԱՍՏԱՆՑՈՒՆ ՍՊԱՆՆԵԼՈՒ ԸԱՄԱՐ ՍԱՓՐԱԳԼՈՒԻՑ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵԼ Է 6 ՏԱՐԻՈՒՅ ԱՁԱՏԱԶՐԿՄԱՆ

2005 թուականին Հայաստանի քաղաքացի թամազ Ամարեանին սպանելու համար 6 տարուայ ազատազրկման է Հինգշաբթի օրը դատապարտուել սափրագլուխների խմբաւորման անդամ՝ Ռուսաստանի Նիժնի Նովոքոբոք քաղաքի բնակիչ Ռոման Լաավրենտեւը: Նրա յանցակիցը դատապարտուել է 45 հազար ռուբլի տուգանքի:

Ինչպէս հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, սափրագլուխների խումբը՝ ոգելից խմելք օգտագործած վիճակում, փողոցում կոչ էին անում հաշուեյարդար տեսնել ոչ սլաւոնական ծագում ունեցող անձանց հետ: Նրանք մօտեցել են փողոցով քայլող երկու հայաստանցու, յարձակուել նրանցից մէկի (Ամարեանի) վրայ եւ դանակի 19 հարուած հասցրել նրան:

«ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ Է »

Շարունակուած էջ 1-էն

«Այժմ այնպիսի ժամանակ է, երբ առաջնորդները պէտք է իրենց ժողովուրդներուն բացատրեն խաղաղ կարգաւորման օգուտը, ցոյց տան զիջումներու միջոցով առաջընթացի ճանապարհը: Այդ դիւանագիտութեան, ոչ թէ պատերազմի ճանապարհն է», ըսած է ԵԱՀԿ Մինսկի խումբի ամերիկացի համանախագահը: Մեթիլ Պրայզայն ընդգծած է, որ բանակցութեան սեղանին արդարացի ու յուսադրող սկզբունքներ են: «Ասոնք մինչ այժմ ներկայացուած լաւագոյն առաջարկներն են: Ես նոյնիսկ կ'ըսէի, որ մենք երբեք այսքան մօտ չենք եղած խաղաղութեան»:

Իր կարգին Միջազգային ձգնաժամային խումբի (ՄՃԽ) Կով-

կասեան ծրագրի դեկավար Սաբինա Ֆրէյզերը ուշազրու յայտարարութիւններ ըրած է ատրպէյճանական ԱՊԱ գործակալութեան: Ան զարմանք յայտնած է, թէ ինչո՞ւ Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ անհանգստացած չեն Մինսկի խումբի համանախագահներու վերջին յայտարարութիւններով: Յատկապէս անով, որ համանախագահները փաստօրէն հրաժարած են միջնորդութենէն եւ կողմերը ձգած են դէմ առ դէմ: Ըստ Սաբինա Ֆրէյզերի, նկատի առնելով որ «Ատրպէյճան երթալով կը գերադասէ հակամարտութեան լուծման ռազմական ճանապարհը», հնարաւոր է պատերազմական գործողութիւններու վերսկսում: Ան կը զգուշացնէ կողմերուն, որ եթէ ռազմական գործողութիւններ սկսին, միջազգա-

- 2. Եթէ ընդունելի են, ապա Ձեր կարծիքով էլ ի՞նչ զիջման պէտք է գնա Հայաստանը, նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, որպէսզի համաձայնութիւնը կայանայ: Եթէ ընդունելի չեն, ապա իմաստ ունե՞ն արդեօք այժմեան ֆորմատով հետագայ բանակցութիւնները՝ հաշուի առնելով, որ թէ միջնորդները, թէ Ատրպէյճանը պնդում են իրենց տեսակէտները:
- 3. Սոյն թուականի Մարտի երեքին Հայաստանի եւ Ղարաբաղի կենտրոնական հեռուստաընկերութիւններին տուած իր հարցազրոյցի ընթացքում Ռոբերդ Քոչարեանը, պատասխանելով այն հարցին, թէ ինչպիսի քայլեր կը ձեռնարկի Հայաստանը, եթէ բանակցութիւնները փակուող մէջ յայտնուեն, ասաց, որ առաջին հերթին տե-ժուրէ կը ճանաչուի ԼՂ Հանրապետութիւնը: Համաձայն էք արդեօք նախագահի այդ կողմնորոշմանը: Եթէ այո, ապա ինչո՞ւ այժմ այդ ուղղութեամբ քայլեր չեն ձեռնարկուած հաշուի առնելով այն հանգամանքը, որ բանակցային գործընթացը այլեւս սպառել է իրեն:
- 4. Պատրաստ էք արդեօք մասնակցել համազգային տարողութեամբ քաղաքական նոր փաստաթղթի մշակմանը, որը թարմացնի հայկական կողմի ընդհանրական դիրքորոշումը Ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման վերաբերեալ: Եթէ այո, ապա որո՞նք պէտք է լինեն այդ փաստաթղթի հիմնական կէտերը: «Երիտասարդ Քաղաքական Գործիչների Ակումբ»

ՂԱՐԱԲԱԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԸ ԻՐ ՆԵՐԿԱՅ ՍԱՐՄԱՆՆԵՐՈՎ ԵՐԲԵՔ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԱՍ ԶԻ ԿԱԶՄԵԼ

ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍՍԱՆՆԱՆ

Լեռնային Ղարաբաղը երբեք ատրպեյճանական անկախ պետութեան մաս չի կազմել, քանզի մինչեւ 1918 թրուականը նման պետութիւն գոյութիւն չուներ: Ղարաբաղը բուն կերպով Ատրպեյճանին միացուեց այն ժամանակ, երբ վերջինս, կորցնելով իր անկախութիւնը, Խորհրդային Միութեան մաս կազմեց: Ղարաբաղի՝ Ատրպեյճանի մաս կազմելը բացառապէս խորհրդային իրողութիւն է, որը դադարեց գոյութիւն ունենալ 1991թ., երբ ԽՍՀՄ-ը վերացաւ աշխարհի քարտէզից այնպէս, ինչպէս Ղարաբաղը՝ Ատրպեյճանի քարտէզից: Դա տեղի ունեցաւ միանգամայն օրինական ձեւով: 1991 Օգոստոսի 30-ին Ատրպեյճանն անջատուեց ԽՍՀՄ-ից՝ կիրառելով իր սահմանադրական իրաւունքը, եւ իրեն յայտարարեց Մուսուլաթական Ատրպեյճանի իրաւայաջորդը, պետականութիւն, որին երբեք մաս չէին կազմել Ղարաբաղի տարածքները: Վերոյիշեալ իրադարձութիւնից երեք օր անց Լեռնային Ղարաբաղը Շահումեանի շրջանի հետ անջատուեց Ատրպեյճանից՝ իր հերթին կիրառելով իր սահմանադրական իրաւունքը՝ «ԽՍՀՄ կազմից միութեանական հանրապետութեան դուրս գալու հարցերի որոշման կարգի մասին» խորհրդային օրէնքի համաձայն, որի 3-րդ յօդուածում նշուած էր, որ «ինքնավար հանրապետութիւններ, ինքնավար մարզեր եւ ինքնավար շրջաններ ունեցող միութեանական հանրապետութիւնը իւրաքանչիւր ինքնավար միաւորի համար պէտք է կազմակերպի անկախութեան առանձին հարկաւորութիւն: Ինքնավար հանրապետութիւնների եւ ինքնավար միաւորների ժողովուրդներն իրաւունք ունեն ինքնուրոյն վճռելու ԽՍՀՄ կազմում գտնուող կամ ԽՍՀՄ-ի կազմից դուրս եկող միութեանական հանրապետութեան կազմում մնալու հարցը»:

Հետեւաբար, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հիմնադրման իրաւական հիմքն անառարկելի է:

Վկայակոչելով պատմա-իրաւական փաստերը՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ պատմութեան մէջ եղել է ատրպեյճանա-ղարաբաղեան յարաբերութիւնների առնուազն երեք շրջան՝ մինչյնդափոխական (1921թ., երբ Լեռնային Ղարաբաղն աւելի մեծ տարածք էր ընդգրկում, քան հետագայում ստեղծուած ԼՂԻՄ-ը, նրա սահմանները Գանձակից ձգուած էին մինչեւ Արաքս գետը՝ ներառելով Շուշիի, Զիվանշիրի, Զեբրայիի եւ Ելիզավետպոլ նահանգի հարաւային շրջանները), խորհրդային (1921-1991թթ.) եւ յետխորհրդային (1991-2006թթ.): Առաջին եւ երրորդ ժամանակաշրջաններում Ղարաբաղը չի եղել Ատրպեյճանի բաղկացուցիչ մաս: Դա եղել է միայն կարճատեւ խորհրդային շրջանում: Այնպէս որ կարելի է եզրակացնել, որ ովքեր խօսում են Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան մասին, ցանկանում են տեսնել խորհրդային իշխանութիւնների վերադարձը:

Ատրպեյճանը երկու անգամ պատերազմ է սանձագերծել արցախահայութեան դէմ: 1988 թրականին, երբ Լեռնային Ղարաբաղը եւ

Շահումեանի շրջանը Ատրպեյճանական ԽՍՀ-ի կազմում էին, ատրպեյճանական իշխանութիւնները Փետրուարի 22-ին գինուած յարձակումներ կազմակերպեցին այն ժամանակուայ ԼՂԻՄ-ի վրայ, այնուհետեւ այն շարունակելով Սումգայիթում, Պաքուում, Գանձակում, Գետաշէնում, Շահումեանի, Շամխորի շրջաններում եւ այլ հայկական բնակավայրերում, իրագործեցին «Օղակ» պատժիչ գործողութիւնը ԼՂԻՄ-ում եւ Շահումեանի շրջանում: Դա փաստօրէն պատերազմ էր սեփական քաղաքացիների դէմ:

ԽՍՀՄ փլուզումից յետոյ արդեն անկախ Ատրպեյճանը նոր պատերազմ սանձագերծեց անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դէմ: Պատերազմը գնում էր Ղարաբաղի տարածքում, եւ արցախահայութիւնը ստիպուած էր դիմելու գինուած ինքնապաշտպանութեան: Այնուհետեւ Լեռնային Ղարաբաղի գինուած ուժերը, անցնելով հակադարձակման, ոչնչացրին հակառակորդի կրակակէտերը եւ կարողացան իրենց վերահսկողութիւնը հաստատել տարածքների այն մասում, որն աշխարհագրորէն Ղարաբաղ տեղանուան սահմաններում է: Ուստի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում չկայ ազատագրուած կամ գրաւեալ տարածք, այլ կայ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ամբողջականութիւն՝ իր ներկայ սահմաններով:

Այսօր Ատրպեյճանը խօսում է երրորդ պատերազմի մասին, եւ համաշխարհային հանրութիւնը ոչինչ չի ձեռնարկում դադարեցնելու համար հակահայկական քարոզչութիւնն ու ռազմատենչ յայտարարութիւններն այդ երկրում: Առաջին հերթին միջազգային հանրութիւնը պէտք է գնահատական տայ կատարուածին: Ատրպեյճանցի փախստականների վերադարձը պահանջող հանրութիւնը պէտք է ընդունի, որ երկու կողմից էլ փախստականների ծագումը Ատրպեյճանի պարտադրած պատերազմի հետեւանք է: Երբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան գինուած ուժերը պատրաստ էին վերջին վճռական մարտը տալուն, այսինքն՝ Ատրպեյճանին կապիտուլյացիայի ենթարկելուն, Ատրպեյճանը, միջնորդներ փնտռելով, ծնկաչոք խնդրում էր դադարեցնել մարտական գործողութիւնները: Եւ դարաբաղեան կողմը գնաց զիջման, ու կնքուեց 1994 թրականի, այսպէս կոչուած, մայիսեան հրադադարի իրաւական ուժ չունեցող պայմանագիրը: Սակայն առայսօր Ատրպեյճանի գինուած ուժերը շարունակում են դիրքային հրաձգութիւնները եւ մարդկային կորուստներ պատճառում դարաբաղեան գինուած ուժերին: Ո՞վ է դրա պատասխանատուն: Ու դրանից յետոյ Ատրպեյճանի ներկայ հանրապետութիւնը հարկ չի համարում խօսել դարաբաղեան կողմի հետ՝ միաժամանակ Հայաստանին անուանելով ազրեսոր, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեանը՝ հայկական համայնք, աւելին՝ Ատրպեյճանը դեռ շարունակում է իր հակահայ քաղաքականութիւնը, որի ցայտուն օրինակն է Հին Զուրաբի յայտարարի ոչնչացումը Իլհամ Ալիեւի թողալուութեամբ իսկ: Արժէ՞ արդեօք նման մարդու հետ

բանակցային սեղանի շուրջ նստել: Ելնելով եւ հիմք ընդունելով նշուած փաստերը՝ գտնում ենք, որ պարտաւոր ենք, թէկուզեւ ուշացումով, կատարել կտրուկ եւ համապատասխան քայլեր՝ չգնալով ոչ մի զիջման, քանի դեռ դարաբաղեան կողմի առաջարկութիւնները չեն ընդունուել համապատասխան ստեանների կողմից:

Լեռնային Ղարաբաղը միանշանակ պէտք է հանդէս գայ որպէս բանակցային լիիրաւ կողմ, այսինքն՝ հակամարտութեան օբիեկտից վերածուի սուբիեկտի: Իսկ Հայաստանի Հանրապետութիւնը հանդէս գա որպէս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ժողովրդի անվտանգութեան եւ անկախութեան երաշխաւոր՝ գինուած ուժեր տեղակայելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածքում եւ դրանք չթաքցնելով միջազգային հանրութիւնից: Այո՛, ԼՂՀ-ն անկախ է եւ պէտք է լինի հայկական երկրորդ պետութիւնը:

Այսօր շատ է խօսուած խաղաղարար ուժերի տեղաբաշխման մասին, եւ ակնարկում է հայ-ատրպեյճանական սահմանը: Ուզում ենք յիշեցնել նման յայտարարութիւններ անողներին, որ հակամարտող կողմերը հանդիսանում են Ղարաբաղը եւ Ատրպեյճանը: Ընդհանրապէս, խաղաղարար ուժերի տեղաբաշխման անհրաժեշտութիւն այսօր չկայ, քանզի խաղաղարար ուժերի առաքելութիւնը պատերազմի դադարեցումն է, կամ հակամարտող կողմերի միջեւ ձեռք բերուած պայմանաւորութիւնների պահպանման երաշխաւորումը:

Եթէ հակամարտող կողմերն ու միջազգային հանրութիւնն իրօք հետամուտ են հիմնախնդրի խաղաղ կարգաւորմանը, ապա առաջին հերթին պէտք է անյապաղ կնքեն կրակի դադարեցման եւ խաղաղութեան պայմանագիր՝ գործընթացում ընդգրկելով Ղարաբաղի եւ Ատրպեյճանի սահմանակից պետութիւններին (Հայաստան, Վրաստան, Իրան), քանի որ Լեռնային Ղարաբաղի հարցը գլոբալ անվտանգութեան խնդիր է:

Այստեղ հարցի առնչութեամբ նպատակաշարժար եմ գտնում ներկայացնել ԼՂՀ Աժ «ՀՅ Դաշնակցութիւն-Շարժում-88» պատգամաւորական խմբի առաջարկութիւնները:

1. ԼՂՀ-ն անվերապահօրէն պէտք է լինի հիմնախնդրի քաղաքական կարգաւորման բանակցային գործընթացի լիիրաւ կողմ, քանի որ ԼՂՀ-ն հակամարտութեան ոչ թէ օբիեկտ է, այլ սուբիեկտ:

2. Հիմնախնդրի կարգաւորման գործում համահայկական հարթութեան վրայ վերջին խօսքը ԼՂՀ ժողովրդինն է, ինչը ենթադրում է այդ գործընթացում դարաբաղեան հանրութեան ըստ ամենայնի ներգրաւում, եւ բացի այդ՝ կարգաւորումը միաժամանակ իշխանութիւնների հաշուետուութիւնն է ժողովրդի առջեւ: Ղարաբաղեան հանրութիւնն իրաւունք ունի եւ պարտաւոր է անմիջական մասնակցութիւն ունենալ իր ճակատագրին առնչուող հարցերին:

3. Հարկ է յստակեցնել ու ճշդել բանակցային գործընթացում երկու հայկական պետութիւնների դերի ու պատասխանատուութեան չափը, իւրաքանչիւրի իրա-

ւասութեան տակ գտնուող շրջանակը: Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է ըստ ամենայնի նպաստի բանակցային գործընթացում դարաբաղեան կողմի լիիրաւ ներգրաւմանը եւ հանդէս գա ԼՂՀ բնակչութեան ինքնորոշման իրաւունքի ու անվտանգութեան երաշխաւորի դերում:

4. ԼՂՀ իշխանութիւններն իրենց գերիշխանութիւնը պէտք է յայտարարեն եւ հաստատեն փաստացի սահմանների վրայ եւ դա ամրագրեն Սահմանադրութեան մէջ:

5. Սկզբունքօրէն եւ հետեւողականօրէն պիտի դրուի այն հարցը, թէ ով է հրահրել ու սկսել պատերազմը, այսինքն՝ նպատակասլաց աշխատանք պիտի տարուի, որպէսզի միջազգային հանրութիւնը Ատրպեյճանը ճանաչի որպէս նախադարձակ կողմ ու ազրեսոր:

6. Պէտք է շրջանաւեր «փոխզիջում» առանց տարածքների» սկզբունքը՝ դրանով իսկ չետին պլան մղելով ազատագրուած տարածքների վերադարձման հարցը եւ հակադրուելով «տարածքներ՝ խոստումների դիմաց» կարգախօսին: Անհրաժեշտ է մշակել նման փոխզիջումների տարբերակները՝ ամրապնդելով դրանք համապատասխան վերլուծութիւններով:

7. Ի չիք դարձնել շրջանաւորութեան մէջ գտնուող այն վտանգաւոր վարկածը, թէ տարածքներ չվերադարձնելը տանում է դէպի պատերազմի վերսկսում: Իրականում միանգամայն հակառակն է՝ տարածքների վերադարձն է խախտում տարածաշրջանում ռազմաքաղաքական հաշուեկշիւը, որն առանց խաղաղապահ ուժերի՝ խաղաղութեան պահպանման հիմնական երաշխիքն է: Այդ հաշուեկշիւի խախտումը եւ կողմերից մէկի անհամարելի ուժեղացումը կամ թուլացումն են մեծացնում պատերազմի վերսկսման հաւանականութիւնը:

8. Ատրպեյճանցի փախստականների վերադարձը հարկ է դիտարկել հակամարտութեան բոլոր կողմերի փախստականների ճակատագրի լուծման ընդհանուր համատեքստում, այն էլ հիմնախնդրի քաղաքական կարգաւորումից ու կողմերի միջեւ վստահութեան մթնոլորտի ստեղծումից յետոյ, քանզի հակառակ դէպքում վտանգ կայ, որ կարող ենք ունենալ «կրկնակի փախստականներ» երեւոյթն իր ահաւոր հետեւանքներով, ինչը նկատուել է վրաց-աբխազական հակամարտութեան ժամանակ: Ընդամին, հարկ է յատուկ ուշադրութիւն դարձնել ոչ միայն հայ եւ ատրպեյճանցի, այլ նաեւ այլ ազգութիւնների (ուրմներ, յոյներ եւ այլն) հիմնախնդրներին, որոնք յանիրաւի անուշադրութեան են մատնուել:

9. Պաղաղապահ ուժերի մուտքի հարցի քննարկումն աշխարհաքաղաքական խնդիր է, ուստի մեր կարգավիճակի խնդիրը ի սկզբանէ պէտք է դրուի: Հետեւաբար, խաղաղապահ ուժերի տեղաբաշխման հարցը կարող է քննարկուել միայն հիմնախնդրի քաղաքական կարգաւորումից յետոյ, այն էլ՝ միայն ու միայն դարաբաղա-ատրպեյճանական շփման գծի երկայնքով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՐԱՆԳՆԵՐԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Ա.

Անգամ մը եւս, քանիբարորդ անգամ ըլլալով, արաբ-իսրայէլեան ողբերգութիւնը իր դրսեւորումը կ'ունենայ, ուղղակի պատերազմական գործողութեանց ձեւին տակ: Իսրայէլ իր ամբողջ բանակի ոչժր-օղային, ցամաքային եւ մարդկային - գործի լծած է կազայի շրջանի պաղեստինեան բնակչութիւնը սարսափի, քանդումի եւ սպանութեան ենթարկելով: Եւ ոչ միայն պարզ բնակչութիւնը, այլ կառավարութեան պատկանող նախարարներ ձերբակալուած են, մինչ թնդանօթներու եւ օդային ուժակողմնակցութեամբ տարափին տակ, ահաւոր եւ ողբերգական վիճակ ստեղծուած է ամբողջ ժողովուրդի մը վրայ:

Պատճառը այս նորագոյն քանդումին պաղեստինցիները սահմանային գոտիէն երկու իսրայէլացի բանակայիններ սպանած են, մէկ այլ զինուոր առեւանգած են: Իսրայէլ կը պահանջէ այդ զինուորի ապահով եւ ողջ վերադարձը, այլապէս վերը նկարագրուած պատերազմական ահաւոր գործողութիւնները պիտի շարունակուին:

Գուրսէն, անկողմնակալ դիտողին համար, յանցանքը, եւ անշուշտ յանցանք գոյութիւն ունի, երկուստեք է, թէ պաղեստինցիներու առեւանգումը, եւ թէ իսրայէլեան հակադարձը իր ահեղ եւ կործանարար ձեւով: Անշուշտ կարելի է հաստատապէս ըսել որ հակադարձը շատ աւելի բուռն եւ քանդիչ է, քան մէկ հոգիի առեւանգումը, եւ սակայն սկզբունքային եւ մանաւանդ հոգեբանական ենթահող մը գոյութիւն ունի գոր անկարելի է մոռնալ եւ նկատի չառնել կատարուած երեւույթներուն մէջ, ենթահողն ալ վերջին պաղեստինեան ընտրութիւններէն ծնունդ առած, եւ ահաբեկչական Համաս կազմակերպութեան կողմէ պաղեստինեան կառավարութեան ստեղծումն է, որ տակաւին կը մերժէ իսրայէլեան պետութեան մը գոյութիւնը, եւ կը խօսի այդ պետութեան քանդումին եւ մէջտեղէն վերցուելուն մասին: Երբ շրջանէ մը ի վեր կը խօսուէր երկու պետութեանց, պաղեստինեան եւ իսրայէլեան, ստեղծումին եւ խաղաղ գոյակցութեան մասին, «Համաս»ը տակաւին կը մերժէ տասնամեակներու վրայ երկարող այս տագնապին լուծումը, եւ ուրեմն կը պնդէ շարունակել իր ահաբեկչական գործողութիւնները իսրայէլի դէմ: Այս ուղղութեամբ կարելի է ըսել որ «Համաս»ին այս

ծայրայեղ կեցուածքին հակառակող շրջանով մըն ալ գոյութիւն ունի պաղեստինցիներու մօտ, որոնք հաւատարիմ կը մնան Եսաբը Արաֆաթի կողմնակիցները: Այս ընդհանուր տրամադրութեան մէջ է որ տեղի կ'ունենար «Համաս»ի նորագոյն գործողութիւնը, երկու զինուորի մահով, եւ մէկ զինուորի առեւանգումով: Իսրայէլացիք իրենց յարձակման պատճառը կ'արդարացնեն այդ մէկ զինուորի առեւանգումը, եւ կը պահանջեն անոր ողջ վերադարձը: Ուրեմն, կարելի է ենթադրել որ եթէ այդ զինուորը վերադարձուի, կազայի վրայ յարձակումն ալ կրնայ վերջ գտնել: Իսկ եթէ հակառակը պատահի, եւ այդ զինուորն ալ մեռցուի, իսրայէլի «բարկութիւնը» կրնայ շարունակուիլ իր ներկայ ահաւոր սահմաններու մէջ: Հարց է ներկայիս թէ ինչո՞ւ այդ զինուորը տակաւին չվերադարձուի, եթէ անշուշտ ողջ է: Իսկ ինչո՞ւ իսրայէլացիք առեւանգած կը պահեն «Համաս»ի պետական պաշտօնեաները: Արդեօք պատանդներու փոխանակման կարելիութեան հեռանկարը ի մտի ունին իսրայէլացիք, որպէսզի դիմած ըլլան «Համաս»ի պատասխանատուներու ձերբակալման: Ժամանակը ցոյց կու տայ:

Ո՞Վ ԿՐՆԱՅ ԿԱՍ ՊԵՏՔ Է ՄԻՋԱՍՏ

Միջագոյնի ահաբեկչութեան դէմ պայքարի այս թէժ օրերուն, ո՞վ կրնայ կամ պէտք է միջամտէ արաբ-իսրայէլեան այս նոր գարգացումը գապելու համար: Ուսամա Պըն Լատընի մարդիկը դարանակալ կը սպասեն աշխարհի գրեթէ բոլոր անկիւններուն մէջ, իրենց ահաբեկչական գործողութիւնները կատարելու: Ինտոնզիան, Անգլիան, Սպանիան, թերեւս նոյնիսկ Ռուսաստան, ահաբեկչական գործողութիւնները բոլորին մտքերուն մէջ են: Պալիի, Լոնտոնի, Մատրիտի ահաբեկչական գործողութիւններու շարքին կարելի է թուել նաեւ, Իրաքի մէջ պատահած, ուսու հինգ դիւանագէտներու սպանութիւնը, որուն, իբրեւ արդիւնք, Փութինի Ռուսաստանն ալ պարտադրաբար կը մտնէ ահաբեկչութեան թատերաբեմէն ներս: Ուրեմն, հարցումը կը մնայ: Պաղ պատերազմի տարիներուն, երկու գերտէրութիւնները կրնային իրենց ենթակալ ուժերու վրայ ազդեցութիւն բանեցնել: Ներկայիս, հրապարակի վրայ գոյութիւն ունի մէկ գերգոր պետութիւն, Ամերիկայի Միացեալ Նահանգները, որ կարող է միջնորդի



Իսրայէլեան բանակի հրասայերը կը մերիտու ժէն դէպի Կազա

դեր խաղալ, եւ յաճախ ալ կը փորձէ, առանց մեծ յաջողութեան: Ամերիկայի հաւանական միջնորդութեան մասին խօսելէ առաջ, կարելի է ակնարկել ուրիշներու մասին: Եւրոպան, Ժամանակին, որոշ դեր կրնար խաղալ: Ներկայիս, հագիւ ձայնը լսելի է, երբ երկու կողմերուն, ինքնագոյով իրատուներ կը բաժնէ: Անգլիան որոշապէս կանգնած է իսրայէլի եւ Ամերիկայի կողքին: Եսաբը Արաֆաթի ողջութեան, Ֆրանսան, իր նախագահ Շիրաքի կողմէ, որոշ կողմնակցական դերք կը բռնէր ի նպաստ պաղեստինցիներուն, Իտալիան իր ներքին հարցերով կը զբաղի: Ռուսաստանի համակրութիւնները ցարդ կը թեքին դէպի արաբական եւ իրանական կողմէ: Ներկայիս, իր դիւանագէտներու սպանութեանէն ետք, յստակ չէ Ռուսաստանի դերքը: Ուրեմն, Եւրոպան շատ լուրջ կ'ընդունի ներկայիս: Արաբ-Մուսուլմանական աշխարհը եւս բաժնուած է, տարբեր ուղղութեանց, Սուրիան կը մնայ լրջօրէն «Համաս»ի կողքին: Եգիպտոսի ձայնը երբեմն կը լսուի, մանաւանդ այս վերջին զարգացումներու ընթացքին: Սակայն այս նոր տագնապը լուծելու յստակ առաջարկներ չկան, ընդունելի երկու կողմերուն համար ալ: Պաղեստինցիներ, ինչպէս ըսուեցաւ, յստակ կեցուածք չունին: Իրենց համար, ինչպէս իրենց վարչապետը վերջերս կը պնդէր, իսրայէլի կողմէ այս մագլցումը միայն պատանդ փրկելու հարց մը չէ, այլ շատ աւելի հեռուն կ'երթայ եւ կը միտի «Համաս»ի կառավարութեան տապալման եւ հրապարակէն քշուելուն: Կը մնայ Ամերիկան, որուն համար հիմնական սկզբունքային կեցուածք է իսրայէլի կողքին կենալ, այն առարկութեամբ որ իսրայէլ Ամերիկայի ամենէն վստա-

հելի եւ ամենէն օգտակար դաշնակիցն է, որուն համար Ամերիկան պատրաստ է ամէն զոհողութիւն յանձն առնելու եւ նոյնիսկ գտնուելու իսրայէլի կողքին, փոխանակ որդեգրելու հաւասարակշռուած դիրք մը պաղեստինցիներու եւ հրեաներու միջեւ: Ամերիկայի եւ իսրայէլի փոխ-յարաբերութիւնները անբախտելիօրէն կապուած են իրարու: Ինչ կը վերաբերի Մերձավոր Արեւելքէն ներս խաղաղութեան հաստատման ներկայ պայմաններու տակ, այդ մէկը ուղակի անկարելի կը թուի Ամերիկա-իսրայէլ ռազմավարական «սթրատէժիք» փոխ-յարաբերութեան պատճառաւ: Կարելի է նոյնիսկ պնդել կամ առարկել որ Մերձավոր Արեւելքի մէջ խաղաղութեան մը հաստատումը կարելի կը դառնար եթէ իսրայէլ գոյութիւն չունենար իբրեւ պետութիւն: Այնպէս որ պաղեստինցիներու եւ վերջերս ալ իրանի նախագահին պնդումները իսրայէլը Մերձավոր Արեւելքի քարտէսէն վերցնելու, ուղղակի երազատեսութիւն կարելի է նկատել: Ամերիկան պէտք ունի իսրայէլի եւ փոխարաբաբար կան սակայն մարդիկ ալ որոնք կը հաւատան եւ կը պաշտպանեն այն թէզը, ըստ որու իսրայէլ բեռ մըն է Ամերիկայի Միացեալ Նահանգներուն, եւ թէ յաճախ այս վերջինը պարտաւորուած կ'ըլլայ իսրայէլը պաշտպանելու թէ քաղաքական եւ թէ սնտեսական մարզերէն ներս: Պէտք չէ մոռնալ նաեւ զինուորական օգնութիւնը, զոր կարելի է նոյնիսկ նմանցնել Ամերիկայի պատերազմական պիւտճէի մէկ կարեւոր մասին:

Ամերիկայի եւ իսրայէլի փոխ-յարաբերութեան այս իւրապատուկ հանգամանքը ունի նաեւ այլ բազմաթիւ պատճառներ, որոնց մասին կը խօսինք յաջորդիւ:

ABA
A.B.A. INSURANCE SERVICES
Authorized Agent CA Insurance Lic. # 0494056
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association
1975-2005
30th
ANNIVERSARY
E-mail: BMaronian@AOL.com

INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY
ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
BEDROS, SIAMANTO MARONIAN
818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ԱԶԳԱՅԻՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԱՍ ԱՐԵԱՆ ԿԱՆՉՐ

ՅԱՐՈՒԹՅՆ ԴԱՒԻԹԵԱՆ

Այս յօդուածը կը ձօնեն հայրենասէր ինքնապաշտ մօրս յիշատակին:

Թէեւ այս յօդուածը կը գրուի Յունիս 6ի նախնական ընտրութեան առթիւ պարզուած կարգ մը երեւոյթներու լոյսին տակ, մեր խորագիրը չվերաբերի այդ ընտրութեան, այլ այն հիմնական ու խորքային ընտրութեան, որ ամէն մէկ անհատ պէտք է կատարէ իր կեանքի ուղին գծելու եւ այդ ուղիով ընթանալու նպատակաւ: Նոյնն է պարզման կազմակերպութեանց, որոնք իրենց ծրագրական տնտեսական մշակումով, կ'ընտրեն իրենց գործունէութեան ուղղութիւնը եւ դաշտը:

Հաւաքականութեան մը գարգացման ու յառաջդիմութեան հասնելու նախապայմաններն մին, այդ հաւաքականութեան բաղկացուցիչ տարրերուն իրար հանդէպ դրսեւորած մօտեցումներն են: Եթէ այդ տարրերը կ'որդեգրեն հաւաքականութեան ընդհանուր շահերով առաջնորդուելու բանիմաց վարքագիծ մը եւ անոր համապատասխան գիրար ամբողջացնող շինիչ գործունէութիւն, ապա այդ հաւաքականութիւնը կը յառաջդիմէ: Բայց երբ անոնք գուրկ են այդ գիտակցութեան եւ կը ցուցաբերեն եսակեդրոն ու հատուածամտ վարք, գիրար հակասող ու իրարմէն գործունէութիւն, ապա այդ հաւաքականութիւնը կը նահանջէ, հոգ չէ թէ պատահապաշտներ ժամանակաւորապէս կրնան յաջողութեան հասնիլ, հետեւաբար անհատներու եւ կազմակերպութեանց առաջնահերթութիւնը պէտք է ըլլայ առաջին տեսակի շինիչ մտածողութեան տարածումը ժողովուրդի մէջ եւ ոչ թէ երկրորդը, որ քանդիչ է:

Դժբախտաբար այս երկրորդին է, որ ակնատես կ'ըլլանք Սփիւռքի եւ Հայաստանի տարածքին: Եւ ոչ միայն այսօր: 1896ին ռուսահայ անձնաւորութիւն մը Պոլսոյ Իգմիրլեան պատրիարքին ուղղուած գաղտնի տեղեկագրի մը մէջ կը նշէր թէ հարցը ոտնակոխ եղած է ու պիտի ըլլայ, այնքան ատեն «որ եսականութիւնը եւ անձնական

հաշիւը գերակշռում է մարդուն մէջ ամէն մի ուրիշ գոյացմունքի: Ահա մեր թշուառութեան, տկարութեան եւ ողորմելի դրութեան բուն պատճառը, առասպելական ժամանակներից մինչեւ հիմա եւ հետեւապէս, հաւանական է եւ ապագայում»: Այս յիշուած մէջբերումն է 110 տարիներ անցած են, կորսնցուցած ենք մեր պապենական հողերուն 90%, Եղեռնին գոհ տուած ենք 1.5 միլիոն նահատակներ, աշխարհով մէկ ցիրուցան դարձած ենք ու տակաւին չենք կրցած ձերբազատուիլ այդ քանդիչ մտածողութեանէն: Ինչո՞ւ: Որովհետեւ պատմութեանն զատել չենք քաղեր եւ որովհետեւ օտարներ շատ լաւ թափանցած են մեր հոգեբանութեան մէջ, միշտ գտնելով անհատներ ու կազմակերպութիւններ, շոյելով անոնց փառասիրութիւնները եւ զանոնք որպէս գործիք շահագործելով, հարուածած մեր ազգը: Այլապէս ինչպէ՞ս բացատրել Ատանայի կոտորածն անմիջապէս յետոյ իթիֆհատի հետ կնքուած պայմանագիրը եւ գործակցութիւնը, Հայաստանեայց եկեղեցւոյ պառակտումը, Հոկտեմբեր 27-ը, նշած ըլլալու համար միայն երեք գլխաւոր օրինակներ:

Տողերս գրողին հայրը Եղեռնի վերապրող մըն էր, 5 տարեկանին կորսնցուցած ըլլալով իր ծնողքը, 3 քույրեր, եղբայր մը, հօրեղբայրներ, հօրաքորներ, եւայլն: Թուրքին հանդէպ իր ունեցած վրիժարական գոյացումները զինք կը մղէին մտնելու Հ. Յ. Դաշնակցութեան շարքերէն ներս, Հալէպի մէջ: Շատ չանցած, տեղական ընտրապաշարի մը ընթացքին, իրենց կը հրահանգուէր հարուածել մրցակից հայ մը: Հայրս կը մերժէր, առարկելով որ իր վրէժը թուրքին դէմ էր եւ ոչ թէ հայու: Ու կը հրաժարէր շարքերէն: Հայրս, պարզաներու բերմամբ, հազիւ մի քանի ամիս դպրոց յաճախած էր, ուսման տէր չէր, բայց հաւատարիմ իր արեան կանչին, իր սիրտը մաքուր հայրենասիրութեամբ կը բաբախէր: Ու կը գիտակցէր, որ ազգին շահը կը պահանջէ, որ հայ մը իրեն տարակարծիք հայրենակիցի մը վրայ ձեռք պէտք չէ բարձրացնէ, իր տեսակէտը պարտադրելու համար: Դժբախտաբար

ուսման տէր իր մեծաւորները, մինչեւ նախկին նախարարներ, այդպէս չէին մտածէր, կլանուած ըլլալով իրենց հատուածական շահերով: Քանի քանի հայ կեանքեր յումպէտս վատնուած պիտի չըլլային եթէ այդ շրջանի պատասխանատուներու մօտ գերակշռէր արեան կանչը եւ ոչ թէ կուսակցական շահը:

Մօտ երեք քառորդ դար անցած է հօրս դէպքին վրայէն, բայց այդ ժամանակուայ Հալէպի ու Պէյրութի նախանձական ու ատելալատ ոգին պարբերաբար իր գլուխը կը ցցէ Ամերիկեան այս ափերուն վրայ: Մանաւանդ Հայաստանի անկախութեան հռչակման յաջողող տարիներուն: Փոխանակ ազգովին փարելու իրականացած այդ երազի ամրապնդման, ատելալատ կիրքերու հրահրումով անգամի մը համար եւս գահավէժ ընթացքի մէջ ենք ազգովին: Ի շահ որո՞ւ: Հայրենասիրական ինչպիսի՞ արդարացիութեամբ տարակարծիք անձինք ծեծի կ'ենթարկուին, անոնց ինչքերը կը հարուածուին, անոնց անունները կը նմանցուին բողոքողի մը ճաշացուցակի անուններուն (Ինչ երեւակայութիւն) անոնց «կոկորդները կրծելու» սպառնալիքներ կը սպազրուին (Ինչ «մարդասիրութիւն») եւ այլազան ուրիշ տարօրինակութիւններ: Խաչաբեկութիւնը հասած է այն աստիճանի, որ ֆաշիստական «ով մեզի հետ չէ, մեզի դէմ է» լօզունգը կը վերագրուի Աստուծոյ Որդի՝ Յիսուս Քրիստոսի: Մեղա՛յ, մեղա՛յ, պիտի բացագանչէր բարեպաշտ մայրս, Աստուծոյ քառութիւն խնդրելով այդ անգիտակներուն համար, «ներէ թշնամի-իդ» քրիստոնէական պատուիրա-

նով զիս դաստիարակած մայրս հաւանաբար վայրկեան մը տատամսէր, ներելէ առաջ այդ անգիտակները, որոնք «չեն գիտեր թէ ի՞նչ կ'ընեն»: Այսպիսի փորձութիւններու ժամանակ, երբ մարդիկ բնազդաբար կը տարուին մտածելու Մովսիսական «աչք աչքի դէմ, ատամ ատամի դէմ» օրէնքի իրաւասութեան մասին, Մահաթմա կանտին է, որ իր պարզութեամբ կու գայ յիշեցնելու բոլորին, որ «եթէ մարդիկ կիրարկեն Մովսիսական այդ օրէնքը, աշխարհ աչազուրկ եւ ատամնազուրկ կը դառնայ»:

Ինչպէս որ այս յօդուածի սկզբը նշեցինք, ամէն մէկ անհատ պէտք է ընտրութիւն մը կատարէ թէ ի՞նչ ուղիով կ'ուզէ ընթացնել իր կեանքը: Ցաւալի է որ պիտի ըլլան անգիտակներ ու մոլորեալներ: Բայց անոնք այդքան ալ այլապանելի չեն: Այսպէս ինչպիսիներուն թերթ ու եթեր տրամադրող պատասխանատու մարդիկն ու կազմակերպութիւններն են: Մեկնած մեր հօր ու մօր ապրուած օրինակներէն ու մեր ազգի պատմութեան թելադրանքներէն, մենք կատարած ենք մեր ընտրութիւնը՝ «վասն հայրենեաց, վասն հաւատի»: Մեզի համար հայ ժողովուրդի պատմութիւնը շահագործելի դրուաքներու շարք չէ, այլ ուսանելի դաստիարակութիւն, մեր կեանքի ուղին ընտրելու եւ այդ ուղիով ընթանալու:

Յ.Գ. Կողբի սիւնակներով կու տանք երկու վկայութիւններ: Ս. Սապահ Գիւլեան եւ Անդրանիկ Ծառուկեան կը վկայեն հատուածական շահեր հետապնդելու չարիքներու մասին:

«ՍՓԻՒՔԻ ՏԱՍՆԱՄԵԱԿՆԵՐԸ»

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Այս շրջանը, 1950-1960, իրաւամբ կրնար համարուիլ կրթական տասնամեակ, եթէ նախորդ տարիներէն շարունակուող ամուլ պայքարը իր պակասիչ շունչով խաթարած չըլլար այնքան բարի տրամադրութիւններ եւ լաւ գործեր, երբեմն անոնց թափը կասեցնելու աստիճան:

Ա.հա Լ.Եւոն Շանթը: Հակառակ յառաջացեալ տարիքին եւ անբաղձալի առողջութեան, Ամերիկա կը մեկնի, հանգանակութեամբ մը ապահովելու համար ձեմարանի ապագան, որուն նոր գնումը շէնքը, մինչ այդ, մասամբ պարտի տակ էր: Կը գնուի այժմու Յովակիմեան-Մանուկեան վարժարանի շէնքի հողը, եւ կարծէ վարձատրելու համար Լ.Իրանցիի մէջ ծայր տուած դպրոցաշինական այս արշաւը, ազնուական հայ աղջիկ մը, օրիորդ Լ.Էլյա Գարակեօզեան, միշտ Ամերիկայէն, անհատական նախաձեռնութեամբ կարելու գումար մը կը գոյացնէ Լ.Իրանցիի համար, որպէսզի աղբատիկ թաղերու մէջ բանի մը դպրոցներ շինուին եւ հայ մանուկները ազատագրուին Պուրն-Համուտի ցեխաստաններուն մէջ տնկուած «վարժատուներէն»: 70 թէ 80 հազար տոյարի գումար մը, որ առասպելական տարողութիւններ չունի, բայց կրնայ անմիջապէս ապահով պատերու եւ տանիքի վերածել մէկէ անկէ տախտակ-թիթի դպրոցները: Բայց կարելու, խիստ կարելու խնդիր մը կայ: Ո՞վ պիտի մատակարարէ այդ գումարը եւ հսկէ շինութիւններուն: Ա.գ. Առաջնորդարանը. «Այս գաղութին անունով հաւաքուած է այդ գումարը, օրինաւոր իշխանութիւնը մեզի ենք, հետեւաբար մեզի պէտք է յանձնել»: Տեղույս Բարեգործականի վարչութիւնը. «Օր. Գարակեօզեանը իր հանգանակութիւնը իրագործած է շնորհիւ մեր Ամերիկայի մասնաճիւղներուն օգնութեան: Դպրոց շինելը մեր կոչումն է եւ գումարն ալ արդէն մեր կեդրոնին ձեռքը: Առաջնորդարանը գործ չունի այդտեղ»:

Խեղճ աղջիկը շուարած է: Որո՞ւն տրամադրելու գումարը: Քանիցս, անձամբ Պէյրութ կու գայ վէրը հարթելու, ուրիշներ ալ կու գան, բայց իգուր: Երկու կողմերը անգիշտ կը մնան, իսկ ձեռները կը շարունակեն կաթկթիլ հայ մանուկներուն տետրակներուն վրայ... Ի վերջոյ կը յայտնի սողոմոնեան արդարութեամբ մարդ մը, Արթիւր Ասլանեան, Տատուրեանի ընկերներէն եւ Բարեգործականի Կեդրոնէն, կրկնապէս չէզոքանձնաւորութիւն մը, նախ անկուսակցական, եւ ապա՝ կաթողիկէ համայնիւն ըլլալուն: Կ'առաջարկէ գումարին կէտը տրամադրել Առաջնորդարանին, կէտը Բարեգործականին: Վերջինները համաձայն

ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«ԻՏՏԻՀԱՏ»Ի ՀԵՏ

Ս. ՍԱՊԱՅ-ԳԻՒԼԵԱՆ

«ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ»

Մի կողմից՝ «բաժանեա՛, գի տիրեցես»ի փառաբանութեամբ Հայ Կուսակցութիւններին իրարուց հեռու պահել, միւս կողմից՝ Հայ տարրեր որսալով՝ իր դիրքը ուժեղացնել, - սա է «Իտտիհատի հոգին»: Ինչ էլ որ ասուի, ինչ պատճառարանութիւն էլ որ բերուի, դրանք անգործ են գործուած էն մեծ սխալը մեղմելու: Պատմական ամենամեծ սխալը, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը գործեց - դա այն պայմանագրութիւնն էր, որ Ատանայի կոտորածից անմիջապէս յետոյ՝ նա կնքեց «Իտտիհատ»ի հետ, նրա հետ համաձայնելով, նրան համագործակցութիւն տալով: Դրանով ոչ միայն «Իտտիհատը» հայերի մէջ մշտական մի կնքուելու նպատակով, այլ ծանրացաւ հայութեան վրայ եւ իր ուղղակի անելի չկարողացածը՝ Դաշնակցութեան ձեռքով նրա միջոցով արեւը:

«Իտտիհատ»ը ջանաց Դաշնակցականներին միայն ցանցելու Հայ Ազգի ներկայացուցիչը. եւ Դաշնակցութիւնն էլ ուզեց այդպէս լինել, այդ ոգով եւ ուղղութեամբ գործել - բայց դա էն մահապալկական թրփոթիւնն էր, որ յառաջ էր բշուում՝ Հայ Ազգը փայլայելու, անդամալուծելու համար Կուսակցութիւնը՝ Ազգի, մասը՝ ամբողջի տեղ ընդունելով: Իրաւ է, դրանով Դաշնակցութիւնը փոքրիկ առաւելութիւններ էր ձեռք բերում, օրինակի համար 5-6 երեսփոխաններ էր տալիս, իր ընկերների համար, դիրքութեամբ, պետական գանազան շահաւէտ պաշտօններ էր ձեռք բերում. - բայց չարաչար տուժողը լինում էր Հայ Ազգը. Հայ Ազգային հաստատութիւնները, ինչ որ «Իտտիհատ»ի ետևողազգին ցանկութիւնն էր եւ նրա ծրագրային գործունէութեան մի մասը:

ՏԵՍԱԿԵՏ

Ո՞՞ ԻՐԱԻՌԻՆՔ ՈՒՆԵՍ ԸԻԱՆԴԱՆԱԼՈՒ
Ո՞՞ ԷԼ ԻՐԱԻՌԻՆՔ ՈՒՆԵՍ ՄԵՌՆԵԼՈՒ
(ԵՐԵՎԱՆԵԱՆ ՏՆՈՒՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ)

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Սոյն յօդուածը գրելու պատճառը Երեւանում իմ երկու հարազատների՝ հանգուցեալ եղբորս տղայի և նրա մօր կարճ ժամանակում (2006 թ. Մայիսի 13-ին և 27-ին) երկրային կեանքից հեռանալուն յաջորդող օրերի իրադարձութիւններն էին, կապուած հիւանդանոցում պառկելու ու նրանց հողին յանձնելու հարցերի լուծման հետ, որոնք աւելի ազդեցին իմ, առանց այն էլ, անելանելի վիճակի վրայ: Սակայն նկատի ունենալով որոշ հանգամանքներ, մանրամասնութիւնները չեմ գրում:

Երեւանում անհանդուրժելի երևոյթները իրականութիւն են, որոնցից չես փախչի:

Հայաստանում բժշկութիւնը ճրի է: Սակայն եթէ շտապօգնութիւն կանչես, պիտի վճարես: Հարեանուհու ճնշումը շատ բարձր էր: Շտապօգնութիւն չկանչեց, որովհետև հացի փող չունէր:

Մանկութեան ընկեր ունեմ երեւանում: Զանգահարեցի: Անտրամադիր էր: Կինը երկար տարիներ հիւանդ է: Պարզուեց, որ կնոջ վիճակը լաւ չէ և չգիտի ինչ անել: Հարցիս, թէ ինչո՞ւ հիւանդանոց չի տանում կնոջը, ասաց, որ միայն հիւանդանոց ընդունելու համար պէտք է 100 տոլար վճարեմ (կաշառք), անհրաժեշտ դեղորայքը պէտք է գնեմ դրսից, անկողինը, սպիտակեղէնը, ուտելիքը, մի խօս-

քով հիւանդի համար բոլոր անհրաժեշտ բաները պէտք է տանեմ տնից և բժիշկներին ու բուժքույրերին էլ վճարեմ, որ հիւանդին հոգ տանեն:

Մանօթ մի կնոջ տղան հիւանդանոցում է պառկել, բայց անհրաժեշտ դեղը չեն տուել նրան: Կինը խօսել է գլխաւոր բուժքրոջ հետ, վերջինս ասել է, որ բժշկի նշանակած դեղը չունեն, բայց մէկը ծախում է, եթէ վճարես, կ'ասեմ կը բերի իմ տունը և կը գաս կը տանես ...:

Միլիոնաւոր տոլարների դեղորայք է բաժանուում Երեւանի հիւանդանոցներին արտասահմանների ու կազմակերպութիւնների կողմից: Ո՞ւր են անյայտանում այդ դեղերը ...: Պարզուում է, որ հիւանդանոցներում մի քանի անձեր իւրացնում են դրանք, հարստանալով հիւանդների հաշուին: Այսպիսի դէպքերը սովորական երևոյթ են դարձել ժողովրդի համար, վերջինս միայն մտածում է ինչպէ՞ս հայթայթել օրուայ հացը: Ո՞ւմ բողոքի, երբ բոլոր կողմերից կողոպտում են, իսկ կողոպտողներին հովանաւորող պետութեան ղեկավարներն են, որոնց միջև բաժանուած են գործունէութեան զանազան ոլորտները...:

Եթէ շտապօգնութիւնը հիւանդին հիւանդանոց է տեղափոխում ծանր վիճակում (ուղեղի կաթուած և այլն), մինչև չվճարեն

չեն ունեցնան կարահանի, իսկ եթէ մահանայ, առանց վճարելու չեն հերձի: Նոյն վիճակն է գերեզմանի հարցում: Զնայած գերեզմանահողը ճրի պէտք է տրուի, բայց նրա «տէրը» գնացուցակ ունի ըստ տեղի՝ 1000, 700, 500, 300 ... տոլար:

Թաղման բիւրոյում վճարում են մեծ գումար, որն ընդգրկում է նաև գերեզմանը փորելու ծախսը: Նոյնիսկ այնտեղ առանց «մաղարիչի» փաստաթղթերը չեն ձեռնարկում, իսկ գերեզմանը փորողին, անկախ այնտեղ վճարուած գումարից, կանխիկ պէտք է վճարել զգալի գումար, հետն էլ ուտելիք և խմելիք ...:

Այս ծախսերին գումարում են դազաղի, հոգեճաշի, ինքնահողի, քահանայի և այլ ծախսեր, որոնց ընդհանուր գումարը կազմում է շուրջ 2 հազար տոլար:

Երեւանում ես եղայ այս բոլորի ականատէսը, մինչև որ հարազատներիս հողին յանձնեցի:

Եթէ հանգուցեալի հարազատները ի վիճակի չեն, ապա բարեկամներով, ընկերներով, ծանօթներով ... դրամ են հաւաքում ու հանգուցեալին առօք-փառօք հողին են յանձնում. «Թասիբի» հարց է: Եթէ հանգուցեալը լրիւ անտէր է, երբեմն Թաղման բիւրոն է կատարում ծախսերը ...:

Հոգեհանգստի համար հանգուցեալին տանը պահում են մօտ 24 ժամ: Այդ ընթացքում նրան այցելում են հարազատներ, բարեկամներ, հարեաններ, ծանօթներ և այլն: Գիշերն էլ հանգուցեալի մօտ «պահակներ» են մնում: Քահանային յուշեցի, թէ հանգուցեալի մօտ երկար մնալով առողջ մարդն էլ է հիւանդանում, արդեօ՞ք էջմիած-

նում մտածում են այդ մասին: Պարզուեց, որ որոշում է ընդունուել Երեւանում կառուցել երկու սրահ իր սառնարաններով, նշուած արարողութիւնը այդ սրահներում կատարելու համար անվճար: Թէ դա ե՞րբ կը լինի, ո՞վ կը լինի նրա «տէրը» և արդեօ՞ք ազնուօրէն կը կատարի իր պարտականութիւնները, ժամանակը ցոյց կը տայ...:

Կեանքի աստիճանաբար աշխուժացման հետ անգործութիւնն ու աղքատութեան վերացումը Երեւանում (բացառութեամբ պետութեան ղեկավարների, նրանց հարազատների, բարեկամների, ծանօթների ու ընկերների, որոնք աշխատանքով ու ապրուստով լիարժեք ապահովուած են) շարունակում են մնալ առաջնային հարցերը, որոնք սպասում են իրենց շուտափոյթ լուծման, եթէ ի հարկէ ժողովրդի «հալից» հասկացող լինի ու կարեկցի նրան:

Երեւանում ամէն ինչ չափուում է տոլարով, որը փոխանցում է երեւանցուն արտասահմանի տարբեր երկրներում և յատկապէս Ամերիկայում ունեցած իր հարազատներից:

Դրամի արժէքը բարձրացնելով տոլարի նկատմամբ, Հայաստանի պետական համապատասխան գերատեսչութիւնները, իրենց այլ նպատակների իրականացման ճանապարհին, երբէք չեն մտածում դրա հետ կապուած աճող թանկութեան մասին: Մի քանի տարի առաջ մէկ տոլարը արժէր 570-580 դրամ, իմ Լոս Անճելոս վերադարձիս նախօրեակին՝ Մայիսի 31-ին այն արժէր 425-426 դրամ: Սա

Շարք էջ 18



WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
"Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL

CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT

EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW

CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

910 E. MAIN ALHAMBRA, CA




NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD



BELLY DANCING

PHOTO/CONCEPT-JD-2005 TEL (626) 795-4493

Massis Weekly

Volume 26, No. 25

Saturday, July 15, 2006

EU Warns Ankara Over Ruling On Armenian Journalist Hrant Dink

BRUSSELS - The European Commission lamented Wednesday a Turkish court ruling against Armenian journalist Hrant Dink for "denigrating the Turkish national identity," warning the case could cloud Ankara's EU hopes.

Commenting on an appeal court ruling on Dink, editor of the bilingual Turkish-Armenian weekly *Agos*, EU Enlargement Commissioner Olli Rehn called on the Turkish government to bolster freedom of speech in the country. "I am disappointed by this judgment which limits the exercise of freedom of expression in Turkey," he said, following Tuesday's court ruling, the first such judgment based on article 301 of Turkey's new Penal Code.

He noted that ruling "will set the trend for lower jurisdiction to follow when applying article 301 in the future," adding: "This is all the more serious since there are still a number of similar court cases pending. I would therefore urge the Turkish authorities to amend article 301 and other vaguely formulated articles in order to guarantee freedom of expression in Turkey," he said.

Rehn underlined that freedom of expression is a key principle of the EU's so-called Copenhagen political criteria, which Ankara must adhere to



Hrant Dink

if it one day wants to join the currently 25-nation bloc. "In any case, the Commission will review the situation in light of the Copenhagen political criteria in its upcoming Progress Report," Rehn said, referring to an annual report on Ankara's EU preparations due in October.

Turkey began EU entry talks last October, but the negotiations are likely to take at least a decade and Ankara has been warned there is no guarantee of eventual membership.

Dink was convicted in October for an article about the collective memory of the mass killings of Armenians under the Ottoman Empire, which many countries recognize as genocide. He now faces the risk of going to prison if he commits a similar offense over the next five years.

Armenians Pessimistic About Democracy And Development

YEREVAN -- Most Armenians believe that their country is moving in the wrong direction and do not expect next year's parliamentary elections to be democratic, according to a U.S.-funded opinion poll released on Wednesday.

The survey commissioned by the U.S. Agency for International Development was conducted in late April and early May by three Western non-governmental organizations, including the U.S. International Republican Institute and Gallup. Some 1,200 respondents across Armenia were asked to express their opinion on a broad range of issues, including democracy building, the economy and the Nagorno-Karabakh conflict.

Fifty-five percent of them said Armenia is on the wrong track and only 32 percent claimed the opposite. The critical evaluation appears to primarily stem from lingering socioeconomic problems which, according to the poll, top the list of ordinary Armenians' preoccupations.

Nearly half of those polled described high unemployment as the most pressing challenge facing the country. The overall socioeconomic situation was the second most frequently mentioned issue, followed by the unsolved Nagorno-Karabakh conflict, the near-term resolution of which is considered "very important" by about 80 percent

of Armenians. By comparison, only 4 percent singled out the need for international recognition of the 1915 Armenian genocide.

Although 42 percent of respondents admitted that the economic situation in Armenia has improved in recent years, only 23 percent said they

Polling Data

| | |
|---|------------|
| <i>Do you think things in Armenia are going in the...</i> | |
| <i>Right direction</i> | 32% |
| <i>Wrong direction</i> | 55% |
| <i>Not sure / No answer</i> | 13% |

and their families have become better off as a result.

The poll also exposed popular concerns about political problems such as vote rigging and human rights abuses, with 58 percent seeing a serious lack of democracy in the country. Its findings also suggest that Armenians widely distrust their government's assurances that the next parliamentary and presidential elections, due in 2007 and 2008 respectively, will be more democratic than the ones held in the past and strongly criticized by the West. Seventy percent of them do not think that the 2007 elections will be free and fair, according to the survey.

"Nagorno Karabakh Must Participate In The Negotiations At Which Its Fate Is Being Determined"

STEPANAKERT -- On July 6, a joint press-conference of Nagorno-Karabakh Republic National Assembly Chairman Ashot Ghoulian and NKR Minister of Foreign Affairs Georgy Petrossian dedicated to their working visit to the United States of America (June 22-July 2) took place in Stepanakert.

Presenting the goals of the visit NKR Parliament Speaker Ashot Ghoulian noted three directions according to which the work was carried out in the largest cities of the USA – Boston, New-York and Washington.

According to him, the Karabakh delegation first of all used the direct possibility of introducing the unprejudiced information on Nagorno Karabakh, positions on different issues to the political circles of the USA.

A package of issues concerning the rendering of humanitarian aid to Nagorno Karabakh was discussed. Ashot Ghoulian told that during the meetings in the USA the NKR delegation stressed the necessity of transfer from realization of purely humanitarian programs to the programs of development in Nagorno Karabakh.

The NKR delegation also fulfilled a work directed to the strengthening of ties with the American compatriots and

discussed the current and prospective programs.

"The Armenian Diaspora is active not only in economic and financial issues. We also have a big potential for political cooperation, which is a good prerequisite for the enlargement of contacts of our Republic with the outer world," - the NKR NA Chairman said.

Ashot Ghoulian emphasized the meetings with the dominant representatives of the Congress dealing with the foreign assignments, as well as the co-chairmen of the Armenian group of the USA Congress Frank Pallone and Joe Knollenberg, whom he had an individual talk with. The Speaker noted that on the whole during the meetings in the Congress the key points were mainly placed on the aspects of the Karabakh settlement and the positions of the NKR on them. An opinion that Nagorno-Karabakh Republic is a serious stability factor in the region was expressed. At the same time the anti-Armenian policy carried out by Azerbaijan was condemned.

Ashot Ghoulian and Georgy Petrossian dwelt on the meeting with the American co-chairman of the OSCE Minsk Group Mathew Bryza, which

Continued on page 3

Armenian Court Refuses To Order Arrested Editor's Release Committee to Protect Journalists Calls Arman Babajanian's Arrest Politically Motivated

YEREVAN/NEW YORK -- An Armenian appeals court upheld on Wednesday the controversial pre-trial detention of the Arman Babajanian editor of the "Zhamanak Yerevan" newspaper who is facing up to five years in prison for alleged draft evasion.

The panel of three judges rejected a petition to overturn a lower court ruling that allowed state prosecutors to keep Babajanian under a two-month pre-trial arrest.

Babajanian's lawyer, Robert Grigorian, argued that Armenia's criminal code allows for his client's release on bail and assured the judges that the editor would not obstruct the investigation or flee the country. "I believe there were sufficient grounds for the court to accept our petition," he said after the announcement of the verdict.

The petition was also signed by several members of the Armenian parliament who offered to pay for the bail and guarantee Babajanian's "proper behavior" before and during the trial. Grigorian said he will likely appeal to the Court of Cassation, the highest body of criminal justice in Armenia.

In a joint statement last week, the editors of Armenia's leading newspapers suggested that the case is politically motivated and demanded that their colleague be set free at least until the end of his trial. Similar demands were voiced by six non-governmental organizations involved in human rights and press freedom advocacy.

Also expressing concern about Babajanian's prosecution was the New York-based Committee to Protect Journalists (CPJ). "We are very concerned that the criminal case against Arman Babajanian may be related to his journalism," its executive director, Joel Simon, said in a statement on Friday. "We call on Armenian authorities to release him pending trial and make their evidence against him public."

The US State Department website has included Arman Babajanian's case in its weekly Human Rights and Democracy developments quoting CPJ sources who believe that charges against the editor of the opposition daily in Armenia are motivated by his newspaper's critical reporting on government conduct.

Announcement by Armenian American Newspaper And TV Producers on Page 2

Armenia: Few Objections To Mediator's Karabakh Statement

By Haroutiun Khachatrian
(Eurasia Net)

Senior Armenian government officials and political leaders appear to have reconciled themselves with a top American diplomat's disclosure of details of a draft peace agreement covering Nagorno-Karabakh.

In a June 22 interview with Radio Free Europe/Radio Liberty, US Deputy Assistant Secretary of State for European and Eurasian Affairs Matthew Bryza revealed the existence of a framework agreement that would resolve the 18-year conflict between Armenia and Azerbaijan. The framework envisages the withdrawal of Armenian forces from the occupied territories around Karabakh, as well as "a vote at some point in the future" on Karabakh's status, and a "normalization of Armenia's ties" that would allow an international peacekeeping presence and economic assistance to the disputed region.

In a July 5 interview with the Haykakan Zhamanak daily newspaper, Bryza explained that his comments were part of a new strategy endorsed by the Minsk Group's French and Russian co-chairs to promote public discussion of the peace framework. "It is not my decision to disclose the [framework agreement's] principles," said Bryza, recently appointed as US co-chairperson of the Minsk Group, the body tasked by the Organization for Security and Cooperation in Europe with moderating talks between Armenia and Azerbaijan. "It was the decision of the three co-chairs, taken even before I became co-chair."

In Armenia, initial government reaction to the interview was emotional. Anger appeared targeted more at what was perceived to have been left unsaid, than at what was actually disclosed about the draft agreement. On June 26, the official newspaper Hayastani Hanrapetutiun published a story on Bryza's comments under the title "Provocation or Pressure?" In the piece, the Armenian Foreign Ministry cited what it perceived as the gaps in the information provided by Bryza. The ministry stated that the regions connecting Armenia with Karabakh, Lachin and Kelbajar, are expected to remain under Armenian control until a referendum on the enclave's status is held. During the period preceding the vote, Karabakh, according to the ministry, would also be given an internationally recognized status.

Following Bryza's disclosures, President Robert Kocharian stated that Armenia was ready to adopt the document as the basis for further negotiations, whereas Azerbaijan appeared reluctant to endorse the draft agreement. The Armenian side, however, has denied a July 3 report on the Azerbaijani news site Day.az, which quoted Azerbaijani Deputy Foreign Minister Araz Azimov as

saying that Kocharian and Aliyev would meet July 17 to discuss a Karabakh settlement.

Notably, no political party or public organization in Armenia has objected to the proposed Armenian withdrawal from the seven occupied territories, often termed "liberated" by Armenian organizations and politicians. The prospect of such a swap has been called "reasonable" by opposition leader Aram Sargsian, head of the Hanrapetutiun (Republic) Party and brother of the late defense minister Vazgen Sargsian, founder of the Yerkrpah organization of war veterans.

In Armenia, public debate on the issue has intensified amid speculation about possible new disclosures about the peace negotiations. On June 26, presidential spokesperson Viktor Soghomonian told the Mediamax news agency that Yerevan may make public all documents relating to the peace talks over the last seven to eight years, including papers covering the 2001 presidential summit in Key West, Florida. It was at that meeting that Kocharian and the late Azerbaijani President Heidar Aliyev reportedly agreed in principle on a peace deal, only to see the supposed agreement unravel within weeks. Hayots Ashkharh, another pro-government daily, commented that by disclosing such documents, Yerevan would "restrict the room for maneuver" for Baku. The commentary went on to claim that Azerbaijan is a frequent source of inaccurate information concerning the peace talks. Despite the urgings of politicians and analysts, however, the Armenian government has not yet released the documents.

In their absence, key questions about the proposed framework agreement linger. In a July 6 editorial entitled "Let's Discuss, But What?," the daily newspaper Aravot wondered whether the referendum on Karabakh's status would be held among the enclave's actual population, as proposed by Armenia, or among the residents of Azerbaijan, as advocated by the Azerbaijani government. The newspaper also queried whether Lachin and Kelbajar would remain under the control of Armenian forces before the referendum is held, or whether they would be demilitarized, as proposed by Azerbaijan.

Analysts seem sharply divided about the known features of the framework peace deal. For example, scientist Alexander Iskandarian was quoted by the Hayots Ashkharh daily on July 6 as saying framework agreement favors Armenia as never before. But others, including 168 Zham newspaper columnist Armen Baghdasarian, maintain that war with Azerbaijan seems inevitable since Baku would not risk a legitimate referendum on the enclave's status.

Haroutiun Khachatrian is a Yerevan-based writer specializing in economic and political affairs.

Third International Jazz Festival To Be Held On July 16-17 In Yerevan

Third International Jazz Festival of Yerevan will be held on July 16-17 at the Malkhas Yerevan club. State Jazz Orchestra of Armenian Public Television and Radio, Armenian Jazz Band, the Jazz Band of the 70-s, Artaskh Jazz Band, as well as the US well-known Earth, Wind and Fire Experience Feat Al McKay AllStar band will take part in the festival. The latter will first perform in Yerevan on July 17 at the Aram Khachatrian concert hall.

The first Yerevan International Jazz Festival was held in 1998, the second in 2000.

ANNOUNCEMENT

On behalf of the Armenian Media and intellectuals of Southern California, we strongly condemn and express our deep concern on the recent arrest of journalist Arman Babajanian, editor-in-chief of "Zhamanak" newspaper, and the subsequent court decision for two month preliminary detention, following allegations of document falsification to justify the final year of his army draft deferment.

In spite of the explanations given by the authorities regarding the pending case and the justifications for their course of action, we are convinced that Arman Babajanian has been detained solely for his political and journalistic activities. The circumstances surrounding his arrest and the hasty decision to secure his detention attest to that.

Freedom of speech and expression are the Constitutional right of every citizen of the Republic of Armenia, and the cornerstone of democratic principles. However, it is absolutely unacceptable, when the laws and the courts system are used to suppress and stifle that right. There is no doubt, that the pending case is just a pretext to muzzle Arman Babajanian prior to the upcoming elections and yet again abolish from the political arena an independent newspaper that is critical of the authorities and cannot be controlled by them.

ՊՏՈՅՏ ՍԸ ԹԱՏԵՐԱԳԻՐ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՎԵՏ ԻՐ ԻՍԿ «ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ» ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ

Քսաներորդ դարում ֆրանսական մշակույթը ողջ աշխարհին տուեց նաև Անհեթեթի թատրոն, որի հիմնադիրները եղան Իռլանդ Սամուել Բեկետը, Ռուսին Էթեն Կոնեսկոն և հայազգի Արթուր Ադամովը: Նոր մտածողության ակունքների մօտ յայտնուած գրողներ էին նրանք, ում համար նեղ էր գալիս ոչ միայն ֆրանսական, այլև համաշխարհային բեմական գրականութիւնը: Նրանք ջանադրաբար պաշտեցին իրենց իսկ ստեղծած թատրոնը սեփական տան պէս, սակայն խոստովանեցին սայթաքումները, վրիպակները, կրկնաբանութիւնը, կաղապարը, անհող գաղափարը: Այս ամէնը շտկելու փութացին Ժան Պոլ Սարտրը, Ալբեր Գամիւն, Ժան Կոկտոն: Համայն աշխարհում լայն թափ ստացաւ Անհեթեթի գրականութիւնը: Ծրագրային նախադուռ հանդիսացաւ նորագոյն մտածողութեան տախտակամածին յայտնուողների ստեղծագործական ճանապարհին: Նրանցից մէկն էլ մեզանում անուանի թատերագիր Արման Վարդանեանն է, որ ի շարս պոլսահայ արդի գրականութեան առաջատար դէմքերի՝ Չահրատ, Խրախունի, Վարդերես Գարակէօզեան, Ռոբեր Հատտեճեան, Ջաւէն Բիբերեան, անվարան փորձում է ընդլայնել թատերգութիւն հասկացողութեան ոչ միայն սամանները, այլև ասելիքի ժամանակը, համարձակորէն բախել վաղուայ դուռը... դուրս մղուած արտաքին գործողութիւնները ստորագրելով բարոյահոգեբանական ներքին եռուզեռին, փրկուումներին, ապաշխարանքին: Շէքսպիրեան «ոչնչից մեծ աղմուկ» սարքերու հոտառութիւնը բոլորը չեն կարող ժառանգել: Դա քչերին է տրուած, որոնցից էր Փարաջանովը, որ համաշխարհային շարժապատկերից «արտաքսեց» շարժումը, ապաւինեց լոկ պատկերին ու հասաւ յայտնագործութեան: Վկայ... «Նուան Գոյնը» ժապաւէնը:

Բարդ բան էէր սա, բայց ձեռք բերուեց կեանքի գնով: Ժամանակին Եւրոպացի մամադէտները բացականչեցին, թէ չեն հասկանում Փարաջանովը «գիւտարարութիւնը» աբսոլյութեամբ, բայց խոստովանում են նրա մեծութիւնը: Ազատագրուած մտքի պայծառատեսութիւնը իսկապէս կարող է ցատկել լեռնաշղթաների վրայով՝ առանց Օդանաւային միջնորդութեան, շրջել տիեզերքով մէկ իր թիւ մէկ արագութեան շնորհիւ և ոչ միայն տեսանելի դարձնել գեղարուեստական վաղը՝ այլև շօշափել: Այսպիսով Ֆրանսացի Գողոն վաղուց է յայտնուել հայկական բեմահարթակում: Սամուել Բեկետի «Գողոնին Սպասելիս» անհեթեթի դրամայի նոյնանուն հերոսը հայ բեմում բնաւ էլ խորթ չի գգոււմ իրեն, ընդհակառակը՝ հանգիստ է, որ ստեղծագործական նոր «եղբայրներ» ունի: Գողոնի սպասուած գալը ինչ որ չափով էլ նոյնանում է Քրիստոսի երկրորդ Գալստեան հետ: Կարեւորն այն է, թէ ե՞րբ են գալու Գողոնները, այլ այն՝ թէ ինչե՞ր են կատարում սպասման մէջ, ժամանողներից առաջ: Պատճառը կայ, յայտնի է, դրոշմուած: Հետեւանք չկայ: Անհեթեթի թատրոնը բերեց հետեւանքի գրականութիւնը: Աշխարհում ինչ որ բանի սպասումը միշտ գիտակցւում է: Դիմաւորման առաքելութիւնն

(Նախախնամութիւն) Միշտ բարձրանալ, բարձրանալ, Երագելով կողքով լուռ անցնել, Փառքից էլ վեր բարձրանալ: Լեւոն Չաքարեան

ակնյայտ է, նախապատրաստելի: Չգալողի համար հիասթափութիւն, յուսահատութիւն չենք ապրում: Այդ չգալուն ուղիղ համեմատական են մեր ձեռքբերումները: Եկողը որքան ուշանայ, մենք այնքան կը հարստանանք թէ լաւով, թէ վատով: Սպասմանը կը դիմանա՞ք արդեօք, դա է ինդիրը: Ուսանողութեանս տարիներին, անհեթեթի գրական աշխարհի ուսումնասիրմանը զուգահեռ մտքովս անցան թուամանեանական ինքնատիպ հետիաթները: Հասկացայ, որ դրանց լաւագոյն մասը, «ճիշտ» Անհեթեթութիւն են պարունակում: Ուղեցի արուեստագիտութեան թեկնածուականի նիւթ տալանք: Գաղափարս յայտնեցի պետական քննութեան յանձնաժողովի նախագահ, անուանի կաճառական, թատերագէտ Ռուբէն Ջարեանին: Հաւանեց տեղույն վրայ: Խոստացաւ օգնել, ընդդիմախօսել, սակայն 1988ի երկրաշարժը շատերի երազանքի հետ կործանեց նաև իմը: Չպաշտպանեցի: «Թուամանեանը որպէս համաշխարհային Անհեթեթի հիմնադիր՝ թեման մնաց իմ ստեղծագործական արխիւում առ այսօր: Ես կարօտով եմ յիշում սա ի պատիւ ընթերցանութեան իմովսանն ծարաւի: Այնուամենայնիւ, Անհեթեթի թատրոնը յայտնուեց Երեւանում, Մոսկուայում, Ռիգայում, Բեռլինում, Լոնտոնում, Նիւ Երոքում ու Պոլսում... փոխեց իր դէմքն եւ դիմագիծը, քանզի իմացածը սահմանափակ է, չիմացածը՝ անվերջանալի: Պոլսահայ թատերգութեան ջահակիրը դարձաւ Արման Վարդանեանը, նրան ինձ համար յայտնութիւն դարձրեց անուանի բանաստեղծ, նախկին պոլսահայ Վարդերես Գարակէօզեանը: Մինչեւ այս հեռակայ ծանօթութիւնը ես ոչինչ գիտէի: Հետագայում կարդացի եւ պիեսները, եւ նրա մասին գրուած, իմ նախկին համալսարանցի, ընդոստ ամենագէտ Լեւոն Մութաֆեանի «Խաղ Ըստ Արման Վարդանեանի» ստուար աշխատութիւնը: Արդիւնքում մնաց ժամանակակից, ինքնատիպ մի թատերգութիւն՝ տասներեք մասից: Հանելուկն սպառուեց: Հայկական Անհեթեթի թատրոնը կայացած է Սփիւռքում: Հայրենիքում՝ նոյնպէս: Երկրորդեք, որ «Սակուրի» Ապրիլն են Պիպիլոտին նախկին միջատախնայում: Այդ անհատը նոյնն է՝ հանդիսատեսի մէկ մասնիկը: Կը նշանակէ՝ նաև ողջ հանդիսատեսը: Այո, միաւոր որոնող, փնտրող մասնուածի հասարակութիւնը մոռացել է գողոնի կամ գրողների դերն ու նշանակութիւնը: Խիստ անհրաժեշտ ոչնչի արժէքը կենսական իմաստ ունի, որ յաճախ թատերային Հենց Այնպէսն է: Գիտենք, որ մաթեմատիկայում բացարձակ 1 չկայ, կամ պակաս է (միևուս 1) կամ աւելի (պլուս 1): Եւ ահա այս պակասն աւելը խառնելով՝ Ապաշխարանքի թատրոնը գտել է ամբողջական 1, որի թիկունքում գրողներ են հարկաւոր, որ կայանան 10-ը, 100-ը, 1000-ը, միլիոնը, միլիարդը: Այս շարքը գրողների մասին է Արման Վարդանեանի գրականութիւնը: 1980ին հրա-

տարակուած իմ «Հրդեհի Ծաղիկներ» գրքում ես ունեմ հետեւեալ տրիոլետը, որը նախախնամութեան բերումով հիմա նուիրում եմ նրան. Բոլոր թուերը գրօ են եղել, Յետոյ երթի մէջ դարձել են թուեր, Երբ կորցրել են ճամբայ ու թեւեր Բոլոր թուերը գրօ են եղել: Սակայն չեն ապրել իբրև գրողներ, Ելել են փողոց, արիւն են հեղել, Բոլոր թուերը գրօ են եղել, Յետոյ երթի մէջ դարձել են թուեր: (էջ 153, թիւ 63)

Ժամանակին դասական դերասան Յովհաննէս Աբէլեանը նշել է, որ փոքր եկեղեցում էլ կարելի է մեծ պատարագ անել: Պոլսահայ դրամատուրքի մի շարք գործերը բռնում են այս քննութիւնը եւս: Ինչպէս Անհեթեթի ներկայացուցիչները, այնպէս էլ Ապաշխարանքի ջատագովները եկան հաւաստելու, որ անգամ թատրոնի «մահամերձութեան» պարագային այն չի մեռնում, այլ վերածնունդ է տաղանդաւոր գրչի շնորհիւ: Վաչ թատերագէտները սուգ ու շիւանի փոխարէն պարտաւոր են կարող ճեղհնակներին, գնահատել, օգնել, խրախուսել: Ախր, Անհեթեթութեան թատրոնը ժխտեց ակնապիշ գորավարժութիւնները, ծանրագոյն կահ-կարասին, հանգեց ժլատութեան, կարեւորեց խօսքի հոգեբանութիւնը, տրոհուած ԵՄ-ի տուայտանքը, ֆիզիքական գործողութեան նպատակալուծութիւնը: Բայրոնի թանկ բնորոշմամբ՝ Աստուծոյ հետ խօսել թոյլատրող միակ լեզուի երկու ճիւղերով են ստեղծուել Անհեթեթի, Ապաշխարանքի թատրոնների գեղարուեստական գրականութիւնը եւ Հայրենիքում, եւ Սփիւռքում: Շատ են անունները: Միմեանցից անկախ, բայց միասին են երկուստեք նոյն ժամանակի մէջ, բայց տարբեր տարածքներում: Եւրոպական աւանդույթներով, բայց հայեցի լիցքով: Կտաւի դատաւարութիւն կ'անես, թէ շատ ապահարգան, հաշիւը մէկ է՝ անհեթեթութիւնը պիտի պայթի ու հետն էլ պայթեցի միջակութիւնը: Թատերագիրը ծանծաղուտի գօտեմարտ չի մղում, նրանը խորքն է, ծաւալը, տարողութիւնը, հասարակական ողջ կեանքի ու կենսակերպի ծանրութեան կեղծոնի շեղման ահագնգր: Ըստ նրա համոզման՝ ոմանց «ագուաները կտցահարել կը ջանան»: Ոմանք էլ տառապում են «մարդուն խօսք հասկնելու դժուարին գործոնով»: Երրորդների համար էլ «գրամը պարելու կը ծառայի, սեւալին ինդիքները՝ ապրեցնելու»: Ինչնախարագանման, ինքնամաքման հեղինակային գործընթացը որդեգրուած են կերպարները որպէս գոյութեան առաքելութիւն, որպէս գոյապայքարի տարատեսակ: Ուստի «ամէն անհատ իր յեղափոխութիւնը ունի»: Արման Վարդանեանի առողջ, առաջադէմ ոչնչապաշտութիւնը դրանով է ապաշխարային: Նա ուսուցիչներ ունի, բայց չեն իմանում, աշակերտներ էլ ունի՞ թէ ոչ: Ցաւն այն է, որ արմատները կարող են մնալ առանց սաղարթապտակալումն ու հետեւանք-այգեկութիւն: Որպէսզի ձնագունդը մեծանայ, անհրաժեշտ է, որ նրա շրջապատում առատ ձիւն լինի: Բնաւորութիւններ կերտած թատերգութիւնը կը հարթի իր ճանապարհը: Դա էլ կերպարների միմեանցից

առանձնացնող յատկանիշներն են: Ե. Չարենցի «Յիշողութիւններ Երեւանի ուղղիչ տնից» երկի մէջ գանգրահեր տղան կարեւորել է մէկ շատ անհրաժեշտ հարցադրում՝ «Դերակատար, թէ գործող անձ»: Ես՝ իբրև արհեստավարժ բեմադրիչ ու թատերագիր, երկրորդում եմ մեծ բանաստեղծի կարծիքը, ընգծելով գործող անձի կարեւորութիւնը: Դերաստողը, կատարողը հեռուն չի գնա: Ապաշխարանքի թատրոնը գործող անձանց մարտադաշտ է նոյնպէս: Հպարտանքն, որ արդէն ունենք այն մեզանում, չմոռանանք, որ այն կորցնելուն կարող են արջի ծառայութիւն մատուցել անտարբերութիւնը, աւելին՝ նախանձը, լուրթիւնը, չկամութիւնը, քենը եւ այլն: Բոսֆորից ու Դարդանից հեռու չեն անցնի նրանք, ովքեր չեն տեսնի Մարմարա ծովն ու նրա ափին ապրող մեծացող գրողի անհատականութեան զարթօնքը: Տայ Աստուած, որ Արման Վարդանեանը մենակ չմնայ: Հիմա մենակ չէ նա: Արդէն շատերը գիտեն նրա մասին: Կարդացել են նրան: Խորհել ու տառապել են հաւասար եւ ոչ միայն Անցեալ Կատարեալում, այլև ներկայ Ծարունականով վերցրած եւ դեռ Ապաւնիի նախախնամութեանն ապաւինելիս: Մեծ է նրա բերած ջրային տարածքը, Մարմարայից էլ մեծ, վեցերորդ ովկիանոսի պէս մի բան է, ուր ոչ թէ խեղդուած են, այլ ապահով ու անվնաս ափ են հասնում գրեթէ բոլոր նաւագները, որքան էլ հին ու նոր ծովահները փայտէ, արհեստական ոտքով ահաբեկեն: Արման Վարդանեանի ստեղծագործական կղզին հաւատամքի ու սաղանդի շնորհիւ պիտի որ թերակղզի դառնայ, այսինքն՝ բեմադրուի, հասնի Աստուած ականջներին՝ երկրի վրայ ու երկնքում: Ոչ մի նշանակութիւն չունի, որ սովորաբար հեղինակի գործերում գերիշխում է անցեալ ժամանակը, բայց այն հէտ տրոհելի է, նա անպայման կը ծնի իր վաղը: Կերպարայնութեան ճգնաժամից վայրկեան առաջ դուրս եկողը կը թօթափի նաև կրկնաբանութեան տեղաշարժը, նրա հետ էլ հանդիսատեսը, որը միշտ սպասում է Գողոնի գալուն: Բոլոր եղելութիւնները սպասման ածանցն են: Մենք սիրում ենք սպասել: Միջոցներ չենք ինչպէս նախապատրաստուելու համար: Ջրկանքի գնով ենք յաճախ սպասում: Գիտենալով հանդերձ, որ սա միակողմանի սպասում է: Ժամադրութիւն չէ, որ պարտադրուածը յայտնուի, խօսացուածը կատարուի: Սա կամակայակնութեան ծակունքն է, որ շատ ցցուն է երեւում թատրոնում: Խտիրով, թէ անխտիր՝ լրջութեան պակասն էլ, ինչպէս անլրջութեան աւելացումը, ի վերջոյ լճացման քարզիչներ են, ճատրակային ձիւն քայլքի կարօտ, ճահճուտի նախամայր: Անշուշտ, իւրաքանչիւր հեղինակ լաւ գիտէ իր անելիքին ու ասելիքը: Վաղ թէ ուշ նա է տէրն իր ժամանակի ու տարածութեան, ով որ անձուրաց է մտնում մեծ խաղի մէջ: Նժարելով հանդիսարգանքն ու հանդիսատեսին: Լաւ թատերագրութիւնը ինքնին արդէն լաւ թատրոն է: Լաւը այս դէպքում յարաբերական չէ: Լաւը սաղանդաւորն է, ասելիքաւորը, նորագոյնը: Լաւը համամարդկայինն է վերջապէս: Հաշուի առնենք Արման Վարդանեանի վերնագրային հաւակնոտութիւնը, որ «Ագուաուկը»

ԽՈՐԱՍԱՆԸ ԵՒ ՄԱՇՏԱԴԻ ԸԱՅԵՐԸ

**ԱԼԵԿՍԱՆԻ ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԱՐՍԿԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՆԵՑ՝
ՆՈՒԱՐԿԱՐԳԱՐԵԱՆ**

Այն ինչ այս տողերում ներկայացուցում է յարգելի ընթերցողին, Պարսկաստանի Խորասան Նահանգի հայ համայնքի համառօտ պատմութիւնն է: Համայնք՝ որը երկար տարիներ գոյատևելով այդ մարզում նպաստել է տեղի, եւ ինչու է նաեւ իր սեփական տնտեսական առաջադիմութեան ու վերելքին:

Բնատուր հետաքրքրութիւնս, երիտասարդ տարիքից ինձ մղել է գտնելու պատճառը թէ ի՞նչու մենք հայերս սիրած ենք ամբողջ աշխարհի տարածքով եւ այստեղ իրանում: Այս առթիւ հարցնում էի ծնողներին ու բոլոր մեծահասակ ազգական, բարեկամներին: Ստացած դրական պատասխանները նոթագրում էին, որից հետեւեալ եզրակացութեան՝ «Այդ մարդկային բնական բնույթ է, մարդը ձգտելով ստեղծել լաւ պայմաններ, լաւ կեանքի համար, միշտ պատրաստ է վտանգել կամ աւելի շուտ դիմադրաւել առաջիկայ հաւանական

բուրում, հագիւ մի ամսական՝ ծնողներիս հետ տեղափոխուեցինք Սաբզվար, մանկութիւնս եւ երիտասարդութիւնս անց եմ կացրել Սաբզվարում, Փահլաւի տարրական եւ Ասրար միջնակարգ դպրոցներում աշակերտեցի, կրթութիւնս շարունակելու համար Մաշհատ գնացի, յետոյ գնացի Թեհրան եւ հանքային ընկերութեան մէջ պաշտօն ստացայ: Հինգ տարի Բանդար Աբասում եւ շրջակայքում գործունէութիւն ունեցայ: Քսան տարի այս ընկերութեան տարբեր վայրերի հանքերում աշխատեցի մինչեւ 1978 (1357) թիւը, որից յետոյ ատիպուած հանգստի կոչուեցի եւ տարբեր գբադմունքներով տարիներ իրանում ապրեցի եւ ահա մի քանի տարի է, ինչ ապրում եմ Ամերիկայի Քալիֆորնիա նահանգում:

(Էրիք)

Խորասանը իրանի ամենամեծ եւ ամենաբերրի նահանգն է միշտ եղել է եռուն եւ յարածուն կարգավիճակում: Լինելով սահմանակից եւ հարեւան արեւելեան ու հիւսիսարեւելեան երկրների հետ, ունենալով ներքին եւ արտաքին ճամբաների հնարաւորութիւն, ունեցել է եզակի եւ կարեւոր դեր ներգրաւելու հարեւան երկրներից վաճառականներ, արհեստաւորներ՝ տարբեր ազգութեամբ որոնք նպաստել են իրանի տնտեսական զարգացման: Այս նահանգի կեդրոնը հազարթ Ռեգա, մասնատական շինքների 8րդ մարզարէի մարտիրոսանալուց յետոյ կոչուել է Մաշհատ այսինքն մարտիրոսավայր: Էմամ Ռեգայի գերեզմանի գոյութիւնը պատճառ է դարձել որ Մաշհատը ամբողջ աշխարհի Շիեների ուխտավայրը համարուի եւ ամէն տարի հազարաւոր շիեներ ուխտի գալով, ուշագրաւ նուիրատուութիւններն անում եւ հարստացնում այս նահանգը:

Նրա հարեւան թուս քաղաքը որտեղ ամփոփուած է իրանի անուանի բանաստեղծ եւ դիւցազներգու՝ Հաքիմ Աբու Ղասեմ Ֆերդուսու աճիւնը, ազգային պարճանքներից եւ գրականութեան նփայլուն գոհարներից մէկը լինելով, լուսաւորել է ժողովրդի սիրտն ու հոգին, ստեղծելով փառք ու պարճանք հինաւուրց իրանի համար:

Այսպիսի նահանգում եւ այսպիսի քաղաքում տարբեր ազգեր են բնակուել որոնց մէջ եղել են մի բուռ հայեր, որոնք 19րդ դարու վերջին Ղազարների թագաւորութեան շրջանում վաճառականական եւ արհեստի բնագաւառում գործնական դեր են ունեցել եւ հնարաւորին չափ ծառայել այս երկրին: Այս գաղթողները՝ գաղթել են Երեւանից, Արցախից, Նախիջեւանից, Ազուխից կամ Ռուսաստանից էին, մի որոշ տոկոսով եկել էին իրանի Ատրպատականից եւ Իսֆահանից եւ գբադում էին վաճառականութեամբ եւ տարբեր արհեստներով: Ատրպատականից կալի է յիշել թումանեան եղբայրներին որ ունեցել են վաճառական աչքառու գործունէութիւն՝ որի մա-



1950 թ. Մաշհադի Ս. Մեսրոպ եկեղեցւոյ մուտքին Ս. Զատկուայ տօնին

սին հակիրճ կերպով կը ներկայացուի յաջորդ էջերում:

Կարելի է ասել հայերի կեանքն ու գործունէութիւնը իրանում սկսուել է 1606 թուից երբ Շահ Աբբասը նրանց մեծ թւով քոչել տուեց Իսֆահան որը ժամանակին շատ հակիրճ կերպով պատմութեան գիրքերում եւ մանրամասնօրէն հայերէն լեզուով յիշատակուել է:

Խորասանի հայերի կեանքը երեք մասից է բաղկացած:

1. Ղազարների թագաւորութեան օրօք 1900-1925 (1279-1304) ա.թ.
2. Ռեգա Շահի թագաւորութիւնից մինչեւ նրա հրաժարուելն ու երկրից հեռանալը: (1925-1941 (1304-1320))
3. Մոհամադ Ռեգաշահի թագաւորութիւնից մինչեւ Իսլամական Յեղափոխութիւնը: (1941-1977 (1320-1357)):

1. Ղազարների իշխանութեան օրօք հայերը բնակուում էին Իսֆահան Ատրպատական, Գլիան եւ Մազանդարանի շրջանում: Եւ գբադում էին վաճառականութեամբ, տարբեր տեխնիկական արհեստներով՝ գինագործութեամբ, ոսկերչութեամբ, լուսանկարչութեամբ, դերձակութեամբ, կառավարական եւ գինուորական ծառայութեամբ, բայց Խորասանի քաղաքներում տեղական եւ կրօնական պատճառներով աւելի քիչ հայեր էին բնակուում: Նրանք աւելի դէպի հիւսիս գտնուող քաղաքներում ինչպէս Դարէտագ, Շիրւան, Բոշնարդ, Ղուշան, Էսֆրայէն, Սաբզվար, Նիշաբուր եւ Մաշհատում զգոյշ ու կաշկանդուած վիճակում գործունէութիւն ունէին եւ յաճախ ունենաում էին Ղազարների արքայազների եւ իշխանների պաշտպանութիւնը:

Քաներորդ դարակազում Մաշհատում գործունէութիւն ունեցող հայերից առաջին տեղն էին գրաւում թումանեանների ուղարկած ներկայացուցիչները (մնացածը որոնց անունները ամենայն հաւանականութեամբ վերցուած է մեծերի նոթագրութիւններից եւ պատմածներից) նրանք եւ Խաչատուր Բաղդասարեան, Մելքիսէթ Ղարիբեան, Արսէն Մանգասարեան, Մեհրաբեան եղբայրներ, Բէգհանեան, Օրբելեան, Խանչարեան, Մելքոն Յարութիւնեան, Մկրտիչեան, Արմենակ Սանթուրեան, Զոհրաբ եւ Լեւոն Սոլուխանեան եղբայրներ, Գասպարեան, Դաւիթեան, Քարամեաններ եւ ուրիշներ որոնք իրենց ընտանիքներով ապրում էին Մաշհադի Արք (բերդ) թաղամասում յետագայ ազգային Այգու (Բաղէ Մելի) մօտակայքում: Պէտք է աւելացնել քացի հայերից կալին նաեւ ուսւ վաճառականներ եւ տեխնիկներ, մի խումբ ուսաբնակ հրեաներ որպէս կրօնական

փոքրմասնութիւններ եւ որովհետեւ վաճառականութիւնը բարգաւաճ վիճակի մէջ էր ու ձեռագործ գորգերն ու սարսանքատեսակներ Ռուսաստանի վրայով էր Եւրոպա արտահանուում, Յարական կառավարութիւնը էլ բանկային մասնաճիւղ հիմնելով Մաշհատում, դրամական դիւրութիւններ ստեղծեց վաճառականական առեւտրի մէջ:

Հայկական համայնքը մտահոգ էր եկեղեցու ու դպրոցի չգոյութեան համար: Տներում կազմակերպուեցին դասընթացներ: Ուսուցիչներ վարձուեցին թաւրիզից եւ թեհրանից որոնք բոլոր առարկաները պարապում էին մալթեի լեզուով, միայն տղաների համար պարսիկ ուսուցիչներ էին վարձուում պարսկերէն գրելկարդալ սովորեցնելու համար: Ունեւոր դասակարգը իրենց գաւակներին ուսանելու համար ուղարկում էին Հայաստան, Ռուսաստան մինչեւ անգամ Եւրոպա:

Թեհրանի եւ Մաշհադի համայնքների ջանքերով Հայկազեան թեհրանի դպրոցի մասնաճիւղը, (որը հիմնուել էր պաշտօնապէս ու կառավարութեան արտօնութեամբ եւ օժանդակութեամբ), 1913ին որպէս առաջին հայկական դպրոց Մաշհատում հիմնուեց, որտեղ երկու երեխաները բոլոր դպրոցական առարկաները սովորում էին հայերէն լեզուով:

1942ին սկսուեց առաջին համաշխարհային պատերազմը, ստեղծելով տնտեսական սուր տագնապ եւ անյուսալի ու դժուարին կացութիւն, ընդհանուր երկրի եւ ի մասնաւորի հայ փոքրամասնութեան կեանքում: Մաշհադի հայութեան մի մասը գնացին Հայաստան կամ վերադարձան իրենց քաղաքները, եւ Խորասանի հայերը համարեայ կեդրոնացան Մաշհատում, մինչեւ դիմագրաւեցին ստեղծուած դժուարութիւնները: Բայց Ռուսաստանում տեղի ունեցած սոցիալիստական յեղաշրջման հետեւանքով սպիտակ ուսաների, հայերի, ազերիների եւ այլոց գաղթը հեղեղեց Խորասանի հիւսիսային քաղաքներն ու Մաշհատը, որը ժամանակակից էր Ղազարների թագաւորութեան անկման եւ Ռեգա շահի գործի գլուխ անցնելուն:

Իրանում տեղի ունեցած փոփոխութիւնները պատճառ դարձան 1924 (1304) Ռեգա շահը թագաւորութեան հասաւ եւ գնալով գործերն ու հասարակական կեանքը կարգ ու կանոնի ենթարկուեցին: Պետական հիմնարկութիւններ հիմնեցին, դպրոցներ հիմնեցին եւ հայերի համար էլ ապրուստի ու գործելու նպաստաւոր պայմաններ ստեղծուեցին: Հայերից ոմանք ընդունուեցին



Հայկական կլուբում մտնողական Խոբերդի ընտրութիւններից յետոյ 1949 թ. ընտրուեց Պրն. Արշաւիր Յարութիւնեանը: Ձախէն աջ՝ Պրն. Սաւրէն Խալաֆեան, Ալեքսանի Սարգսեան եւ Պրն. Արշաւիր Յարութիւնեան

վտանքները այդ նպատակի համար, ինչպէս եւ արեւ են մեր հայրերը ու այսօր մենք եւ ուրիշներ մեզ պէս, կամայ թէ ախմայ՝ որեւէ պարտրուակով եկել հասել ենք Միացեալ Նահանգներ:

Այս տողերը որ ընթերցում էի, երկար տարիների անցեալ ունեն, ինձ հետ ճաշակել են ժամանակի տաքն ու պղղը, քաղցրութիւնն ու դառնութիւնը, 1994ին վերանայել եւ դասաւորել եմ, կարծէք ճակատագրի բերումով դա եղաւ իմ պարապ ժամերի գբադումս երբ առաջացած տարիքում ես հաստատուեցի Ամերիկայում:

Ողջոյն անցեալի երջանկայիշատակ հայ հոգիներին, որոնք ապրեցին ու անմահացան Խորասանում արժանի անուն ու վաստակ թողնելով իրանի պատմութեա նմէջ: Գրելով ու յիշատակելով այս համեստ տողերը կ'ուզէի համեստօրէն նրանց հետեւորդը համարուել: Եթէ նրանց երրորդ եւ չորրորդ սերունդը պատահամբ ընթերցեն այս համառօտ տողերը թող հպարտ գգան որ իրենց հայրերը գործունեայ ազգային, ժողովրդական եւ ձեռներէց մարդիկ էին եւ եթէ ունեն որեւէ յուշ կամ փաստ աւելցնելու այս տողերին, բարի գտնուեն համագործակցելու կամ գրուեցն սրանով հարատացնեն իրենց յուշերը:

Տողերիս գրողը ծնուել է Նիշա-

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԻՐ ՆԵՐԿԱՅ ՍԱՐՍԱՆՆԵՐՈՎ ԵՐԲԵՔ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՄԱՍ ՉԻ ԿԱԶՄԵԼ

Շարունակում է 5-էն

Խաղաղապահ ուժերի առաքելութիւնը, որպէս կանոն, պատերազմական գործողութիւնների դադարեցումն է կամ էլ հակամարտող կողմերի միջեւ ձեռք բերուած նոր պայմանաւորուածութիւնների պահպանումը, այն էլ այն դէպքում, եթէ կողմերը ի վիճակի չեն ինքնուրոյնաբար դա անել: Իսկ մեր պարագայում երկու պայմաններն էլ բացակայում են:

10. Ղարաբաղեան կողմի համար միանշանակ ձեռնտու է հիմնախնդիրը իրաւական հարթութիւն տեղափոխելը:

11. Միջազգային իրաւունքում հակասութիւն չկայ ազգերի ինքնորոշման իրաւունքի եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքների միջեւ: Տարածքային ամբողջականութեան սկզբունքն ուղղուած է մի պետութեան կողմից մէկ այլ պետութեան սահմանները միակողմանիօրէն իր օգտին փոփոխելու փորձերի դէմ, մինչդեռ ներքին հակամարտութիւնները, այդ թւում «կենտրոնի» ու ինքնորոշման իրաւունքի համար պայքարողների հակամարտութիւնները ոչ մի ձեւով չեն ներառուում տարածքային ամբողջականութեան սկզբունքում, այսինքն՝ մեր պարագայում ինքնաբերաբար առաջնայինը հենց ազգերի ինքնորոշման սկզբունքն է:

12. Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ատրպէյճանի կազմում, իսկ ներկայիս Ատրպէյճանական Հանրապետութիւնը, ըստ իր անկախութեան հռչակագրի, իրաւաջաջորդ է ոչ թէ Ադր. ԽՍՀ-ի, այլ 1918 թ. հռչակուած Ատրպէյճանի Դեմոկրատական Հանրապետութեան, որի կազմում ԼՂ-ն չի եղել, եւ որին Ազգերի լիգան դեփոք է չի ճանաչել: Հետեւաբար, ինքնորոշման իրաւունքը չի հակասում Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեանը, այսինքն՝ Ատրպէյճանն անկախացել է առանց Ղարաբաղի, ինչպէս նաեւ՝ Նախիջևանը, այսինքն՝ նախկին ԼՂԻՄ-ը մասնակցութիւն չի ունեցել Ատրպէյճանի անկախութեան գործընթացին:

13. Ներկայումս ամբողջ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է բոլշեւիկեան-կոմունիստական ռեժիմի ժառանգութիւնը, իսկ ԼՂ-ն Ադր. ԽՍՀ կազմում է յայտնուել հենց այդ ռեժիմի կամայական որոշմամբ:

14. ԼՂ-ն Ադր. ԽՍՀ-ի կազմից դուրս է եկել ԽՍՀՄ օրէնսդրութեանը համապատասխան: Մասնաւորապէս, 1990 թ. Ապրիլի 3-ին ընդունուած «ԽՍՀՄ կազմից Միութեանական Հանրապետութեան դուրս գալուն առնչուող հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրէնքի յօդուած 3-ում ասուած է. «Իր կազմում ինքնավար հանրապետութիւններ, ինքնավար մարզեր եւ ինքնավար օկրուգներ ունեցող Միութեանական Հանրապետութիւնում առանձին հանրաքուէ է անցկացուած ամէն մի ինքնավար կազմաւորումում: Ինքնավար հանրա-

պետութիւնների ու ինքնավար կազմաւորումների ժողովուրդներին իրաւունք է վերապահուած ինքնուրոյն որոշել ԽՍՀՄ կազմում մնալու կամ ԽՍՀՄ կազմից դուրս եկող միութեանական հանրապետութեան կազմում մնալու հարցը, ինչպէս նաեւ իր պետաիրաւական կարգավիճակի հարցը»:

15. Ղարաբաղեան կողմի համար միանշանակ ձեռնտու է նաեւ հիմնախնդիրը պատմա-մշակութային հարթութիւն տեղափոխելը: Պէտք է յստակ ներկայացուի մշակութային ջարդը Ատրպէյճանի կողմից:

16. Հարկ է յատուկ ուշադրութիւն դարձնել ԼՂՀ-ում եւ Նախիջևանի ինքնավար հանրապետութիւնում հայկական պատմա-մշակութային արժէքների քարոզմանը եւ ներկայացմանը միջազգային հանրութեանը:

17. Բոլոր ժամանակներում էլ Ատրպէյճանի իշխանութիւնները վարել են հայհալած, հայերի սպիտակ եղեռնի քաղաքականութիւն, ինչի պերճախօս վկայութիւնը ներկայիս հայագերծուած Նախիջևանի ինքնավար հանրապետութիւնն է: Ուստի նորովի ու աւելի հիմնաւոր պէտք է վերլուծել եւ ներկայացնել այն փաստերը, ըստ որոնց՝ Ատրպէյճանի ցանկացած իշխանութեան եւ քաղաքական կարգերի ժամանակ նոյն հայհալած քաղաքականութիւնն է վարուել, հետեւաբար, բացառուած են Ատրպէյճանի հետ ԼՂՀ ցանկացած ուղղահայեաց յարաբերութիւնները:

18. Հարկ է ըստ ամենայնի ներկայացնել նախալեզափոխական Արցախի պատմութիւնը՝ համապատասխան քարոզչամիջոցներ ձեռնարկելով եւ օգտագործելով հայ պատմագիտութեան ընձեռած հնարաւորութիւնները:

19. Օսմանեան թուրքիայում հայերի ցեղասպանութիւնը հարկ է առնչել Ատրպէյճանի հայհալած քաղաքականութեան հետ՝ ի ցոյց դնելով 1905-07 թթ. Պաքուում, 1905-07 եւ 1920 թթ. Շուշիում, 1988 թ. Սումգայիթում եւ այլուր հայկական ջարդերը:

20. Ե՛ւ դարաբաղեան հանրութեան եւ՝ արտաքին քարոզչութեան համար շատ կարեւոր է այն հարցի յստակ լուսաբանումը, թէ՛ ա) ինչպէ՞ս է ձեւաւորուել 1918 թ. Ատրպէյճանի Դեմոկրատական Հանրապետութիւնը, որը պանթուրքիզմի քաղաքականութեան իրականացման հերթական քայլ էր՝ ուղղուած առաջին հերթին իրանի եւ Հայաստանի դէմ.

բ) Ի՞նչ ազգերի միաձուլումից է առաջացել Ատրպէյճանցին.

գ) Ի՞նչ ազգեր են ապրել, եւ ո՞ւմ են պատկանել Ատրպէյճանի ներկայիս տարածքները:

21. Հիմնախնդրին առնչուող եւ հայկական կողմին ձեռնտու միջազգային պայմանագրերի, մասնաւորապէս՝ Սեւրի պայմանագրի ընձեռած քարոզչական հնարաւորութիւնների օգտագործում, այն հանգամանքի վրայ շեշտադրումով, թէ՛ դրա չկատարումը ինչ

«ՍՓԻՌՔԻ ՏԱՍՆԱՄԵԱԿՆԵՐԸ»

Շարունակում է 7-էն

են, Առաջնորդը՝ ոչ.- «Կամ բոլոր մեզի, կամ բնաւ չենք ուզեր»: Ասլանբա-նիմ հարցումը, կէս-կատակ, կէս-լուրջ.- «Սրբազան, քանի դպրոցի դրամ է, եւ ամբողջ գումարը մեր ձեռքն է, եթէ եղածին պէս ամէնքս տանք մեր մասնաճիւղին, որպէսզի իրենց դպրոց շինեն, ի՞նչ կրնամ բնել»: Պատասխան. - «Ձեռք կրնար, որովհետեւ կ'արգիլենք, կատարուքեան միջոցով: Եթէ մէկ քար դնեն, երկու քար կը փլցնեն: Երեսփոխաններ ունին...»: Ձե՞ք հաւատար: Իրաւունք ունի: Որովհետեւ Առաջնորդը իր մտածումը չէ որ կ'արտայայտէ, այլ կը կրկնէ լսածը, ինչպէս միշտ: Չարութիւնը չէ որ կը խօսի իր բերնով, այլ մտքի հեղգութիւնը:

(Նոյն խնդրով, կուսակցական ղեկավարներու եւ մտաւորականներու հանդիպումի մը մէջ, օրեր առաջ: Մէկը կ'անաջարկէ.- «Վերջ տանք այս անիմաստ վէճին: Համաձայնիմք: Վաղը կրնան իրենք գործածել դրամը, իրենց ուզած տեղը դպրոց շինել, եւ ի՞նչ կրնանք բնել»: Անգիջող եւ կարծր գլուխ մը.- «Ձեռք կրնար, տղայ կը դրկենք, մէկ քար շարեն՝ երկու քար կը փլցնեն»: Ներկայանքէն Մուշեղը (բանաստեղծ Մ. Իշխան) անգամի մը համար քօթափելով կրաւորական լուսփունը, կ'ընդվզի.- «Ի՞նչ կ'ըսես, երբայր, տեղ մը հայ դպրոց շինեն եւ մենք երթանք խանգարենք, կը վայլե՞ մեզի»:

հետեւանքներ ունեցաւ միջազգային հանրութեան համար: Գերտէրութիւնների քաղաքականութեան եւ խոստումների վերաբերեալ աւելի յստակ պատկերացում կազմելու համար կարեւոր է հետեւեալ թեմայի լուսաբանումը՝ «Հայ ժողովրդի պատմութեան մէջ չիրագործուած խոստումներ» (Բեռլինի կոնգրէս, Սեւրի պայմանագիր եւ այլն):

22. Մեր արտաքին քաղաքականութեան մէջ պէտք է հակազդել հիմնախնդիրը իբրեւ տարածքային վէճ ներկայացնելու՝ Ատրպէյճանի փորձին: «Չճանաչուած տարածքներ» հասկացութեան փոխարէն հարկ է շրջանաւորութեան մէջ դնել «չճանաչուած երկրներ» հասկացութիւնը: Երկրներ, այսինքն՝ ժողովուրդ եւ տարածք:

23. Բանակցային գործընթացում գրեթէ չի օգտագործուած մեր հիմնական կոռուաններից մէկը՝ Շահումեանի, Գետաշէնի, Դաշտային Ղարաբաղի եւ միւս զաւթուած հայկական բնակավայրերի հարցը, որն անմիջականօրէն կապուած է տարածքային հարցերի քննարկումների հետ: Ղարաբաղեան կողմից

ամենամեծ փոխգիշուումը կատարուել է 1994 թուականին, երբ առանց նախապայմանների գինադադար է կնքուել, մէկ այլ փոխգիշուում էլ Հայաստանի հետ վերամիաւորումից ժամանակաւորապէս հրաժարուած է:

24. Յանխրաւի թերագնահատում է հարցի էթնիկական կողմը: Մեր կարծիքով, չպէտք է խուսափել հիմնախնդրի էթնիկական կողմի քննարկումից (Նախիջևան, Լեռնային Ղարաբաղ, էթնիկական մշակոյթ):

25. Վերոնշեալով հանդերձ գտնում ենք, որ մեր քաղաքականութեան հիմնական ռազմավարութիւնը պիտի լինի ժողովրդավարական երկրի կառուցումն իր բոլոր ինստիտուտներով, ինչը նաեւ կը նպաստի մեր երկրի միջազգային ճանաչմանը:

Ելնելով այս եւ միւս փաստերից՝ գտնում ենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը պէտք է ըստ ամենայնի եւ կարճ ժամկետում ընդունի համապատասխան օրէնքներ եւ որոշումներ՝ դրանք միջազգային հանրութեանը ներկայացնելու համար:

ART PHOTOGRAPHY
JACOB DEMIRDJIAN
(626) 795-4493

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՆԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի ՖՈՆՏԻՆ

«Մասիս» Շաբաթաթերթի Տիկնանց Օժանդակ Մարմինը, սոյն գրույթեամբ՝ շնորհակալություն կը յայտնէ բոլոր անոնց որոնք դրամական եւ այլ նուիրատուութիւններով հովանաւորեցին մեր օրկանի 26րդ տարեդարձի հանգանակային ճաշկերոյթը, սատար հանդիսանալով անոր վերելքին:

Ստորեւ կու տանք այս առթիւ եղած նուիրատուութիւններու ցանկը:

| | |
|---|--------|
| Տէր եւ Տիկ. Սեդրակ Աճէմեան | \$1000 |
| Տէր եւ Տիկ. Հերոս Քաջբերունի | \$1000 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն Գալթագճեան | \$1000 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրոյլեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Խաչիկ Քէշիշեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Գալուստ Տէրտէրեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Յարութ Պոյամեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Թորգոմ Փոստաճեան | \$500 |
| Մի ոմն | \$500 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ Աճէմեան | \$500 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Զոլաքեան | \$500 |
| Bedros Electric | \$400 |
| Տէր եւ Տիկ. Համբարձում Սարաֆեան | \$300 |
| Պրն. Օշին Քէշիշեան | \$300 |
| Տէր եւ Տիկ. Հէրի Վարդանեան | \$300 |
| Pacific Western Bank | \$300 |
| Տէր եւ Տիկ. Գաբրիէլ Մոլոյեան | \$300 |
| Տէր եւ Տիկ. Յովհաննէս Հաննէսեան | \$300 |
| Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան | \$250 |
| Vrej Pastry | \$200 |
| Տէր եւ Տիկ. Վահան Գազէզեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Պողոս Մարգարեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Յովիկ Լաչինեան | \$200 |
| Հ.Մ.Մ.-ի Վարչութիւն | \$200 |
| Տէր եւ Տիկ. Միսաք Թէպէլէքեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ Փափազեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Գէորգ Գուզուլեան | \$200 |
| Պրն. Լեւոն Տարագճեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Նորայր Խաչատուրեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Շահէ Կանիմեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Տանիէլ Իմաստունեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Վահէ Իմաստունեան | \$200 |
| Մի ոմն | \$200 |
| Տէր եւ Տիկ. Սինան Սինանեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ Սէփէթեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Թորոս Եթէնէկեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Փաթաթեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Աւօ Քէրքութեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն Պողարեան | \$200 |
| Մի ոմն | \$200 |
| Պրն. Թոմիկ Ալէքսանեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Փիթր Տարագճեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Աւօ Մակարեան | \$200 |
| Արժ. Տ. Քհնյ. Գառնիկ Հալաճեան | \$200 |
| Տէր եւ Տիկ. Ներսէս Պէրպէրեան | \$100 |
| Պրն. Կէրի Սինանեան | \$100 |
| Պրն. Նազարէթ Աջապահեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Պետրոս Սէֆէրեան | \$100 |
| Bermuda Import-Export Inc. | \$100 |
| Dbա Modul Mrble & Granite | \$100 |
| Տէր եւ Տիկ. Յովհաննէս Մկրեան | \$100 |
| Տօքթ. եւ Տիկ. Արշակ Գազանճեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Հրանդ Սաֆարեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Գէորգ Թաւուզճեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Տիգրան Ժամկոչեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Կարպիս Պալլքճեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Տիգրան Սարգիսեան | \$100 |
| Տէր եւ Տիկ. Զաւէն Արսլանեան | \$100 |
| Serop's Cafe | \$100 |
| Տէր եւ Տիկ. Սահակ Թութճեան | \$100 |
| Organization of Istanbul-Armenians Cultural Committee | \$75 |
| Պրն. Վարդգէս Գաբրիէլեան | \$60 |
| «Քաջ Նազար» Երգիծաթերթ | \$50 |
| Տէր եւ Տիկ. Յարութիւն Սողոմոնեան | \$50 |
| Տէր եւ Տիկ. Ժոն Ժէրէճեան | \$50 |
| Տէր եւ Տիկ. Վահան Քէօշկերեան | \$50 |
| Տիկ. Սաթենիկ Գարաճրճեան | \$50 |
| Տէր եւ Տիկ. Գէորգ Խըրլորեան | \$50 |
| Տէր եւ Տիկ. Միսաք Շիթիլեան | \$50 |
| Տէր եւ Տիկ. Եղիա Ասուրեան | \$50 |
| Տէր եւ Տիկ. Արա Տոսթուրեան | \$25 |
| Տէր եւ Տիկ. Արթին Գալթաքեան | \$25 |
| Տէր եւ Տիկ. Մանուէլ Կէզալեան | \$25 |

Ո՞՞ ԻՐԱԻՌԵՆԵ ՈՒՆԵՍ ՇԻՒՆՂԱՆԱԼՈՒ Ո՞՞ ԷԼ ԻՐԱԻՌԵՆԵ ՈՒՆԵՍ ՄԵՌՆԵԼՈՒ

Շաբաթաթերթ 8-էն

նշանակում է, որ եթէ Երևանի քաղաքացին այն ժամանակ 100 տոլարը փոխանակելով ստանում էր 57-58 հազար դրամ, այսօր ստանում է 42,5-42,6 հազար դրամ, 14,5-15,4 հազար դրամ պակաս, որը Երևանում մի թոշակառուի թոշակից էլ բարձր է: Վերջին օրերս մամուլում կարդացի, որ տոլարի արժէքը շարունակում է ընկնել: Ահա թէ ինչպէս է ազդում այն ժողովրդի բարեկեցութեան վրայ, իսկ դրա դէմ պայքարող կա՞յ...: Ընդդիմութիւնը համա- կիրներին օգտագործում է իր նպա- տակները իրագործելու համար՝ պետութեան ղեկավարների հետ կիսելով ազատ դաշտի աւարը, իսկ իր պաշտօնից հրաժարած ազգա- յին ժողովի նախագահ Արթիւր Բաղդասարեանի «Օրինաց երկիր» կուսակցութեան համար այդ դաշ- տում «տեղ չկայ»: Կարծէք թէ եղած ընդդիմութիւնները այդ դաշ- տը գնել, իրենց սեփականութիւնն են դարձրել և «Օրինաց երկիր»- ին իրենք պիտի թոյլ տան այնտեղ մտնելու (°): Ահա սա է այսօրուան ընդդիմութիւնը, որը հնարաւոր է հետագայում աւելի անմիաբան դառ- նալ Հայաստանի նախագահի թո- ուր գրաւելու պայքարում: Նա անուժ է Երևանի քաղաքական կեանքում որևէ բան փոխել ժողովրդի բարե- կեցութեան համար, այդ թւում, և այս յօդուածում արծարծուած հար- ցերի լուծման գործում:

Բերուած փաստերով բաւա- րարուելով, հարց տանք Հայաստա- նի պետութեան ղեկավարներին, թէ ե՞րբ է վերջ տրուելու անիշխա- նութեանը (անարխիային) Երևանում: Արդեօ՞ք Հայաստանի պետական հա-

մապատասխան կառույցները վեր- ջապէս պիտի հասկանան այս հար- ցերի լրջութիւնը, թէ այս հարցերը մանրուքներ են իրենց գրպանների շահերի հետ համեմատած...: Իսկ համահայկական «Հայաստան» հիմ- նադրամը, որ ամէն տարի պիւլու- քում միլիոնաւոր տոլարներ է հա- ւաքում, արդեօ՞ք նոյնպէս անտար- բեր է մնալու այս հարցի նկատմամբ: Դա էլ բացառուած չէ, քանի որ Մարտակերտի շրջանի ենթակա- ուցուածքների վերականգնման աշ- խատանքների համար նա 2005 թ. Նոյեմբերի 25-ի լուսանկարուած մա- րաթոնում հաւաքել էր 7,5 միլիոն տոլար, սակայն մինչև օրս չի սկսել այդ աշխատանքները (տե՛ս «Համա- հայկական կրթերթ թեժանում են» «Մասիս», Շաբաթ, Յունիս 24, 2006, էջ 2, հեղինակ՝ Յակոբ Բա- դալեան (լրագիր): Սա նշանակում է, որ «Հայաստան» հիմնադրամի ներքին խոհանոցում հարթ չեն գնում գործերը...: 2006 թ. Նոյեմ- բերի 25-ին կը սկսուի լուսանկարու- եան հերթական մարաթոնը, բայց ի՞նչ նպատակի համար և ի՞նչ վստահութեամբ, երբ, անհասկա- նալի պատճառներով, արդէն հա- ւաքուած գումարները չեն օգտա- գործուած նախատեսուած ծրագրե- րի համար: Կարծում ենք որ հիմ- նադրամը պէտք է զբաղուի նաև Երևանի ժողովրդին յուզող հարցե- րով, որոնցից մէկն էլ վերոնշեալ հարցն է:

Դժբախտաբար յօդուածում շօ- շափուած հարցերում չենք կարող օգնել Երևանի մեր հարազատնե- րին ու հայրենակիցներին, միայն կարող ենք «խորհուրդ տալ» նրանց, որ իրենց ամուր պահեն, քանի որ իրաւունք չունեն ո՛չ հիւանդանա- լու, ո՛չ էլ՝ մեռնելու...:

ՊՏՈՅ ՍԸ ԹԱՏԵՐԱԳԻՐ ԱՐՄԱՆ ՎԱՐՂԱՆԵԱՆԻ ՇԵՏ

Շաբաթաթերթ 15-էն

դա մետաղէ կեռիկ է, կարիւիչ, բանալի, բոլորն են դատապարտու- ւած այդ կեռից կախուելու ճակա- տագրով: «Ճոկանը» կեռ գլխիկով գաւազան է նշանակում ըստ բառա- րանի, բայց բացատրականից ելնե- լով բոլորն են ակնկալում այդ գաւազանի հնարաւոր հարուածի ուժգնութիւնն իսկ իրենց գլխին: «Կանկրուկը» ձեռքի կամ ոտքի կոշտուկ է (ուսերէնով՝ մագոլ) բայց հոգի ու սիրտ մաշող, քայքա- յող, պանտոլ բեռ, փոխաբերականով պատիժ, պատիժ ու պատարագի- ուածութիւն, որ ձգտում է արժանա- պատուութեան: «Պախուրցը» սանձ է, երասան, որը լկամն է պահում անբարոյականութեան, անզգամու- թեան, չիշաչարութեան: «Երջակը», բազմածաղկաւոր, բայց փշատերե- լիկ բոյս է, ծակծկելու ու կոշուած, չորացաւ՝ կը գլորուի ուզածը քա- մու բերանն ընկած եւ այն խեղկա- տակի նման, որը թագաւորի առջե- լից գնում է թաւազրոր եւ ար- ժեգրկուած՝ գուարճացնելու անցողի- կը...: «Հեղձակը» լարային նուագա- րանի թրթռացումն է եւ լարն այդ կարող է հանգամանքների բերու- մով դառնալ կախաղանի օղակ...: Իւրաքանչիւրին՝ իրենը: Աստու- նը՝ Աստուծուն, կեսարինը՝ կեսարին: Եթէ խախտուած են այս փոխաբա- բերուածութիւնները, մէջտեղ է գա- լիս վէճը, կռիւը, պայքարը, մարտը, պատերազմը... ձնագնդին մեծա- նում է թատրոնի անկիւններում,

ուր հառաչանքի արձագանքը հա- գիւ է չիշեցնում ապաշխարողի ճակատագրական կործանման վեր- ջին ծւծուցը: Արման Վարդանեա- նի վարպետութիւնն առկայ է: Ոչն- շաբանութիւնը՝ հրատապ: Ձգտու- մը՝ միակամօրէն լինելիք: Հատու- ցումը՝ անտանջանք: Սպասումը՝ անմահութեան թոյլտուութիւն: Բո- լորն ապաշխարուած են հիմա: Մեր հայրենիքն էլ: Ազատութեան, ան- կախութեան 15-ամեայ խաչելու- թիւնը յանգեց՝ Անհեթեթութեան: Թշուառ-անտէրը փոխարինելով ազատ-անկախով, կղիլովեան սայլի հայկական տարբերակն էլ չչարժ- ուեց: Ընկրկեցինք ոճիրով: Պատե- րագմով եկած, յաղթանակով ամ- րագրուած, գինադադարով պայմա- նաւորուած կենսակերպը մեզանում դէմ առաւ ապաշխարանքի: Ազգովի ենք հիմա ապաշխարում, թէ տանը, թէ դրսում: Զոհուեցինք, ափսոսա- ցինք, կուռեցինք ու մնացինք անկ- ուիւ, անաւար, անտուն, իսկը Նոյան ագուաւ: Բայց, ախր մեր իսկ գլխա- վերեւներում ազատ ու անկախ ճախ- րում են իրական աղաւնիները, նրանք էլ են Նոյան Տապանից թուած, ձիթեմու ճիւղիկներ կան կտուցներին: Որտե՞ղ է մերը: Առայժմ՝ գրականութեան մէջ, որի թարմ ու պիղկ դրսեւորումներից է նաև Արման Վարդանեանի բերա- ծը: Ազգայնացնել ու պատրաստ լինենք մեր ունեցածը, որ վաղն ուշ չլինի:

(Շաբաթաթերթի 1)

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



AGBU PASADENA HIGH SCHOOL

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School

REGISTRATIONS FOR 2006-2007 IN PROGRESS

- High School Prep grade (8th grade equivalent)
 - Ninth grade
 - Tenth grade
 - Eleventh grade
- First graduating senior class in June, 2008

AGBU High School in Pasadena will provide...

- A challenging college preparatory program in a safe, caring and supportive environment
- Honors and Advanced Placement classes for accelerated students
- Qualified and experienced faculty dedicated to student learning
- Instruction in Armenian language, history and culture
- Small class sizes and low teacher to student ratio
- Professional guidance and counseling
- Affordable tuition fees

Call (818) 883-5379, (626) 794-0363, or (818) 883-2428 for immediate assistance

2495 E. Mountain Avenue, Pasadena, CA 91107
(Corner of Altadena and Mountain)

www.agbuphs.org

AGBU CENTENNIAL SPONSOR



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

